

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ

Վ.Ա. Միրզոյան
փ.գ.դ., պրոֆեսոր

Դ/006

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ԽՈՍՈՒՅԹԻ
ԼԵԶԿԱՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

2012–2013 ԹԹ. ՆԵՐՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
«ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
2014

ՀՏԴ 330:164
ԳՄԴ 65+87.4
Մ 763

Երաշխավորվել է հրատարակության
ՀՊՏՀ գիտական խորհրդի կողմից

Միրզոյան Վ.Ա.
Մ 763 Ժամանակակից տնտեսագիտական խոսույթի լեզվատրամաբանական վերլուծու-
թյուն/ Վ.Ա. Միրզոյան.- Եր.: Տնտեսագետ հրատարակչություն, 2014.-60 էջ:

ՀՏԴ 330:164
ԳՄԴ 65+87.4

ISBN 978-9939-61-069-6

© Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
«Տնտեսագետ» հրատարակչություն, 2014

Ներածություն

Գրողը պետք է օգնի ընթերցողին:

Ակադեմիկոս Գևորգ Զահուկյանից վերցված բնաբանում պարզ ու անպաճույճ ձևակերպված է «լեզու–խոսք» հարաբերակցության արդյունավետ կարգավորման հիմնական կանոնը: Խոսքի հեղինակը (լինի բանավոր, թե գրավոր հաղորդակցում) ամենից առաջ պետք է հոգ տանի հասկացվելու մասին:

Գիտական խոսույթը (դիսկուրս, discourse) լեզվական իրողություն է՝ ներառված հաղորդակցական որոշակի համատեքստում: Եթե չգիտենք բնագրի լեզուն, ապա չենք էլ կարող կարդալ և հասկանալ, բայց եթե անգամ գիտենք, դեռ բավարար պայման չէ գրվածքը լիովին հասկանալու համար: Հասկանալ գրվածը՝ նշանակում է ըմբռնել հեղինակի մտադրությունը (ինտենցիան), լեզվական իրողությունը վերածել մեր ներքին խոսքի: Իսկ դեռ ժամանակակից լեզվաբանության հիմնադիրներից մեկը՝ Ֆերդինանդ դը Սոսյուրն է հանգամանորեն ցույց տվել, թե որքան բարդ է լեզվական իրողության (langue) և լեզվական գործունեության (langage) կապը:

Առհասարակ, **ինչպե՞ս է գոյանում մարդկային խոսքը:** Ամենից առաջ՝ ասելիք ենք ունենում՝ որևէ դատողություն, կարծիք, վերաբերմունք, հարցադրում, հույզ և այլն: Մեր խնդրո առարկայի առումով, այսինքն՝ գիտական ելույթով հանդես գալիս կամ աշխատություն հրապարակելիս ասելիքը տեսական բնույթի ինչ-որ խնդրի վերաբերյալ որոշակի տեսակետ է, գաղափարի հիմնավորում, առաջարկվող լուծում: Ուստի և ցանկանում ենք ունկնդրին, ակնդրին, ընթերցողին հաղորդել, գի-

տական հանրությանը մատուցել հետազոտական աշխատանքի արգասիքը: Եվ, ահա, պարզվում է, որ չենք կարող միմյանց որևէ բան ասել՝ առանց մեր մտքինը նախապես միջնորդավորելու խոսքով: Խոսողի միտքը, որպես լեզվական միջոցներով ձևակերպված իրողություն, հասցեատիրոջը հասնելու համար պետք է վերածվի խոսքի (parole)՝ որոշակիորեն հյուսված բառաշարի՝ տեքստի (լատիներենից փոխառված այս բառը հենց «հյուսվածք» է նշանակում՝ textus): Միտքը վերածում ենք խոսքի ոչ թե հանուն այդ խոսքի, այլ որոշակի միտք փոխանցելու համար: Այլ կերպ ասած՝ հաղորդակցման ընթացքում իրականանում է ոչ թե «միտք–միտք» ուղղակի կապը, այլ «միտք–խոսք–միտք» անցումը («խոսքի ավարտուն շրջապտույտը»՝ ըստ Սոսյուրի): Իսպառ չմերժելով հեռահաղորդակցության («տելեպատիա») հնարավորությունը՝ ամփոփենք այսպես. մեր միտքը դատապարտված է նախապես դառնալու խոսք, որպեսզի դարձյալ վերածվի մտքի, և այդպես հնարավոր դառնա մարդկային հաղորդակցումը, այդ թվում՝ դրա ամենաբարդ տեսակներից մեկը՝ գիտականը:

Այսպիսով՝ խոսքը, լինի գրավոր թե բանավոր, հաղորդակցման միջոց է և, որպես այդպիսին, պետք է հնարավորինս ստույգ, անխաթար, հավաստի վերարտադրի նախնական միտքը: Իհարկե, ընկալողից էլ է կախված մտքի համարժեք վերարտադրությունը: Խնդրին մոտենանք, այդուհանդերձ, ըստ ջահուկյանական վարքականոնի պահանջի և մասնավորեցնենք գիտական գրագրության առումով: Որքանո՞վ ենք ենթարկվում այդ պահանջին: Հոդված գրելիս որքանո՞վ ենք ջանում մեր միտքը հստակ ու հասկանալի ձևակերպել: Կա բավական ծեծված մի արտահայտություն՝ «ընթերցողի դատին հանձնել».

ղանում մեր այդ դատը հենց ինքներս պաշտպանել, այսինքն՝ ասելիքը մատուցել ընթերցողին՝ առավելագույնս դյուրացնելով դրա ընկալումը:

Թվարկված հարցերը դարձել են հետազոտության ինքնուրույն ասպարեզ: Առհասարակ, «լեզու-խոսք» անցման հիմնախնդիրների մասին ստեղծված է դասական գրականություն, ամենից առաջ՝ Վիլիելմ ֆոն Հումբոլդտի, Ֆերդինանդ դը Սոսյուրի, Լյուդվիգ Վիտգենշտեյնի, Թ. վան Դեյկի, Միշել Ֆուկոյի, Ռուան Բարտի ծանրակշիռ հրապարակումները: Իսկ վերջին տարիներին ավելացել են գործնական ուղղվածությամբ ուշագրավ հրապարակումներ, որտեղ, բնականաբար, շեշտը դրված է գիտական ատենախոսության շարադրանքի և ձևակերպման խնդիրների պարզաբանման վրա:

Այս առումով հայերեն գրողի և խոսողի տրամադրության տակ անհրաժեշտ գրականության պակաս չկա: Հայ դասական հեղինակներից շատերն իրենք են օրինակ ցույց տալիս ընթերցողին հնարավորինս օգնելու, ոմանք նաև հատուկ են անդրադարձել խնդրին՝ Ղազարոս Աղայան, Ալեքսանդր Շիրվանզադե, Հովհաննես Թումանյան, Դանիել Վարուժան, Պարույր Սևակ: Հրապարակի վրա է տեղեկատու, մեկնաբանական, ուսումնական բնույթի ծավալուն գրականություն: Հատկապես օգտակար են բառագործածությանը, խոսքի կառուցման և մատուցման առավել տարածված խաթարումների վերլուծությանը նվիրված՝ «սխալ է-ճիշտ է» սկզբունքով կառուցված հրապարակումները: Այդուհանդերձ, կարիք է զգացվում եղածը լրացնելու բուն գիտական խոսքի վերլուծության օրինակներով, տարատեսակ լեզվասխալների պատճառների պարզաբանմամբ՝ հենց գիտական նյութի շարադրանքում:

Այսպիսով, գիտական հաղորդակցման կողմերի փոխըմբռնման նպատակի դիրքերից լեզուն երկակի դեր է խաղում. մի կողմից՝ հնարավորություն է տալիս հեղինակին իր մտքերը լիարժեքորեն, անկորուստ վերածելու «տեքստի»՝ բանավոր կամ գրավոր խոսքի, մյուս կողմից՝ այդ տեքստի իրական կամ հնարավոր հասցեատիրոջը օգնում է նույնքան անկորուստ վերականգնելու հաղորդման բովանդակությունը: Արդ, իսկ որքա՞ն է դա հաջողվում, հիմնականում ի՞նչ կորուստներ են լինում, արդյոք ամեն հեղինակ իր տնօրինած միջոցներով (լեզվական, կառուցվածքային, տրամաբանական) ամեն ինչ անո՞ւմ է հնարավորինս հավաստի հասկացվելու համար, և եթե ամեն ինչ չէ, որ կատարյալ է, ապա ինչպե՞ս կարելի է բարելավել գիտական հաղորդակցման արդյունավետությունը (բնականաբար, հեղինակի կողմից դիտարկելով հիմնախնդիրը):

Տվյալ հետազոտական ծրագրի շրջանակներում տեսական պրպտումների օբյեկտը ժամանակակից տնտեսագիտության լեզուն է:

1. ԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵՉՈՒՆ. ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Գիտության լեզուն առանձնանում է գեղարվեստական, քաղաքական-հրապարակախոսական, հոգևոր-եկեղեցական, գրասենյակային և խոսքի այլ տեսակներից, առավել ևս՝ առտնին տարատեսակ գրույցներից և գրություններից: Գիտական խոսույթին բնորոշ են լեզվաոճական, տրամաբանական և կառուցվածքային առանձնահատկություններ: Կան գիտական հրապարակումների (մասնավորապես՝ ատենախոսությունների) շարադրանքի ձևին և բովանդակությանը ներկայացվող որոշակի պահանջներ: Միևնույն ժամանակ, գիտական լեզվի գործառնությունը, «լեզու-խոսք» անցումը ենթարկվում են առհասարակ լեզվի (բնական լեզվի) գործառնության և գործածության, կապակցված խոսքի կառուցման համընդհանուր օրինաչափություններին, կան համագործածական բառեր և արտահայտություններ: Բուն իսկ, պայմանականորեն առանձնացված «գիտության լեզուն» ներքնապես տարանջատված է: Բնավ մեծ հմտության կարիք չկա տարբերակելու քիմիայի հարցերին նվիրված հոդվածի լեզուն շուկայական տնտեսության կարգավորման խնդիրների գիտական քննարկման տեքստից, գրականագիտական հետազոտության շարադրանքը՝ մեքենաշինության հեռանկարների վերլուծությունից:

Դրա հետ մեկտեղ, գիտական խոսույթի բոլոր տեսակները ընդհանրություն ունեն: Ամենից առաջ՝ դա եզրերի (տերմին) գործածությունն է, որով ապահովվում է գիտական ոճի միասնականության պահանջի կատարումը: Գիտական խոսքի ձևակերպման մյուս պահանջներն են՝ հստակություն, հիմնադրույթների և խնդրակների (թեզիս) անհակասականություն, բխեցումների հետևողականություն, շարադրանքի ծավալման տրամաբանական հիմնավորվածություն, մատուցման մատչելիություն և այլն:

Գիտական խոսույթը մյուս տեսակներից տարբերակող գլխավոր հանգամանքը, վերջիվերջո, **հեղինակի նպատակադրումն է**. օրինակ՝ մեկ բան է դիվանագիտական փաստաթղթի լեզուն (պաշտոնական-գրասենյակային ոճ), մեկ այլ բան՝ դիվանագիտական հետազոտության լեզուն:

Գիտական խոսույթը բովանդակության և ձևի միասնություն է, որանք պիտի ներդաշնակ լինեն: Գիտական ամենախոր հետազոտությունն իսկ կարող է համարժեք չընկալվել, եթե կառուցվածքայնորեն ու լեզվականորեն անհաջող է մատուցված: Իհարկե, հակառակ պնդումն էլ է արդարացի. սին, փուչ նյութն ամենակատարյալ լեզվով ու կառուցվածքով անգամ չի գոհացնում ընթերցողին:

Գաղտնիք չէ, որ գիտական բանավեճերը հաճախ փակուղի են մտնում ձևակերպումների հստակության պահանջը խախտելու պատճառով: Եվ եթե կողմերը փորձում են վերադառնալ գիտական քննարկման հուն, հարկադրված են լինում «սկսել սկզբից», այսինքն՝ ճշտորոշել ելակետային հասկացությունները: Հակառակ պարագայում մնում է արձանագրել, որ իրենք խոսում են «տարբեր լեզուներով»...

Խոսույթը, որպես խոսքային հաղորդակցման հյուսվածք (տեքստ), միավորում է երկու կողմերին՝ հաղորդագրության հեղինակին և հասցեատիրոջը: Միշտ ենթադրվում է, որ հեղինակն իր մտադրությունը ձևակերպելիս նկատի ունի որոշակի հասցեատիրոջ և ասելիքը հարմարեցնում, պատշաճեցնում է այդ իրական կամ երևութական հասցեատիրոջ ընկալման առանձնահատկություններին՝ լեզվական, կրթական, մասնագիտական, աշխարհայացքային և այլն: Այս առումով, խոսույթը նմանվում է երկկողմանի երթևեկությանը մի կամրջի: Դիցուք, քրիստոնյա քարոզչի խոսքն ուղղված է հատկապես քրիստոնյա հավատացյալին, ենթադրում է վերջինիս գոյությունը կամ գոյության հնարավորությունը: Քաղաքական խոսույթը հեղինակի՝ քաղաքական այս կամ այն իրողությանն առնչվող միտքն է՝ ուղղված միևնույն իրողության մասին որոշակի պատկերացում ունեցող հասցեատիրոջը:

Այս յուրատեսակ երկմիասնությունն առավել ևս բնութագրական է գիտական խոսույթին. հեղինակի և հասցեատիրոջ համար աշխարհի գիտական պատկերը մոտավորապես նույնն է, և այս հանգամանքն է վճռորոշ կողմերի խոսքային հաղորդակցման կախցման համար՝ բանավոր, թե՛ գրավոր, անմիջական, թե՛ հեռահար: Եվ գիտական խոսույթի տարատեսակները զանազանվում են ըստ իրողության այն տիպարի, որ ընկած է խոսույթի հիմքում և միավորում է կողմերին: Տնտեսագետ գիտնականը դատողություն-

ներ է անում տնտեսական կյանքի օրինաչափություններն արտացոլող որոշակի հայեցակարգի շրջանակներում: Հայեցակարգն այն տիրույթն է, որում նա ազատորեն ծավալում է սեփական մտքերը, նոր վարկածներ առաջ քաշում, հիմնավորում դրանք և այլն: Ինքնին հասկանալի է, որ տնտեսական կյանքի օրինաչափություններով բացարձակապես չհետաքրքրվող մեկը չի կարող որևէ կերպ ներառվել տնտեսագիտական խոսույթի մեջ: Հետևաբար՝ իրական է այն խոսույթը, որտեղ կողմերը լիարժեքորեն են ներառված, այսինքն՝ գիտական աշխատությունը կարդում են, գիտական զեկուցումը լսում են գիտնականները, ոչ թե անտեղյակները:

Արդ, որքանո՞վ է արդյունավետ գործադրվում խոսույթի կայացման, հեղինակին և նրա հասցեատիրոջը կամրջող գլխավոր միջոցը՝ լեզուն՝ որպես մարդկանց հաղորդակցությանը ծառայող նշանային որոշակի համակարգ: Գիտնական լինի, թե քաղաքական գործիչ, ամեն մի հեղինակ օգտագործում է լեզվի բառապաշարը, կապակցված խոսք կառուցելու օրինաչափությունները, ոճական հնարավորությունները և այլ լեզվական իրակություններ՝ սեփական մտքերն առավելագույնս հստակ ձևակերպելու և հասցեատիրոջը հասկանալի մատուցելու համար: Գլխավոր կանոնը Գ. Զահուկյանի ձևակերպումն է՝ գրողը պետք է օգնի ընթերցողին: Ուստի, որքան էլ շեշտենք հասցեատիրոջ կարևորությունը, այնուամենայնիվ, խոսույթի ամբողջական արդյունավետության ապահովման մեջ անհամեմատ մեծ է հեղինակի պատասխանատվությունը: Ամեն մի հեղինակ պարտավոր է հնարավորինս ամեն բան անել, որ լեզվական առումով բացառվեն փոխըմբռնման խոչընդոտները:

Գիտական հրապարակման, մասնավորապես՝ ատենախոսության, մենագրության, ամսագրային հոդվածի կառուցվածքային ամեն մի միավոր նույնպես ենթարկված է ընկալման դյուրության պահանջին: Վերնագիրը, հիմնաբառերը, առաջաբանը, գլուխներն ու ենթագլուխները՝ իրենց լեզվական պարզորոշ արտահայտմամբ, բուն տեքստի մեջ տարբեր հատվածների առանձնացումը (թավ, շեղատառ, աղյուսակների, գծապատկերների ձևով և այլն) հնարավորություն են ընձեռում հեղինակին՝ ապահովելու հանրահայտ կամ հասցեատիրոջն արդեն հայտնի նյութից նորին անցնելը («թեմայից» անցումը «ոեմային»), ինչպես նաև մատուցվող նյութը լա-

վագույնս շաղկապելու տվյալ հասցեատիրոջ ընկալունակության առանձնահատկություններին:

Գիտական նյութի մատուցումը պիտի ենթարկվի դեռ Արիստոտելի նշած «պաթոս–լոգոս–էթոս» հարաբերակցության ներդաշնակության հրամայականին: Գիտական հաղորդագրության (նորույթի, պարզաբանման, հանրաճանաչման, դասավանդման) հեղինակի ամբողջական մտադրությունը (պաթոսը), ինչպես նաև դրա ամեն մի առանձին տարր կարող են համարժեք ձևակերպում (լոգոս) ստանալ, եթե նա հաշվի է առնում հասցեատիրոջ ընկալման առանձնահատկությունները (էթոսը): Ինչպես հաղորդակցական այլ իրավիճակներում, գիտական հաղորդակցման ընթացքում էլ այս գործոնների ներդաշնակության խախտումը հղի է իմաստային կորուստների, աղավաղման, թյուրըմբռնման վտանգով: Գիտական զեկուցումը, օրինակ, դատապարտված է ծախողման, եթե հեղինակը խոսքը մատուցում է խրատական, ուսուցողական տոնով, անտեսելով ունկնդիր մասնագետների իրական ակնկալիքները: Նույնկերպ՝ ուսուցողական բնույթի նյութը դժվարությամբ է մարսվում խրթին լեզվական մատուցման պատճառով:

Խոսքը՝ գրավոր, թե բանավոր, ենթադրում է մտքերի հաղորդում (նաև՝ «փոխանակում», եթե հաղորդումը երկուստեք է): Բայց, ինչպես ասվեց, իրականում «միտք–միտք» հաղորդումն անհնար է առանց խոսքի միջնորդավորող դերակատարման: Կողմերի միջև տեղի է ունենում «միտք–խոսք–միտք» անցում՝ միակողմանի կամ երկկողմանի: Այսինքն՝ խոսողությունն ընդամենը միջնորդ օղակ է մտքից միտք անցման համար: Իսկ քանի որ միտքն օժտված է տարածականության հատկանիշով (մինչդեռ խոսքը գծային իրողություն է), ապա գրեթե միշտ անխուսափելի են իմաստային խաթարումները, մտքի փոխանցման կորուստները: Սա ճշմարիտ է մարդկանց խոսքային հաղորդակցման բոլոր տեսակների դեպքում, բայց եթե որոշ տեսակներում իմաստային աղավաղումներն այդքան էական ազդեցություն չունեն, ապա գիտական խոսույթի պարագայում դրանք զգալիորեն նվազեցնում են կողմերի փոխըմբռնման մակարդակը, պատճառում թյուրիմացություն, վիճաբանություն, բախում:

Որպես խոսքային կառուցվածք՝ ոչ միայն գիտական խոսույթը, այլև դրա ամեն մի առանձին օղակ (այսպես կոչված՝ «խոսողական գործողությունը», «speech act», «речебой акт») ոչ թե կամայական հորինվածք են, այլ արտացոլում են իրականությանը հատուկ պատճառահետևանքային կապերը: Իսկ սա նշանակում է, որ գիտական խոսույթը, միզուցե ավելի, քան խոսույթի այլ տեսակներ, պետք է արտահայտի «լոգոսը»՝ լինի տրամաբանորեն անխոցելի: Այդուհանդերձ, վերլուծությունը հիմք է տալիս ասելու, որ գիտական հրապարակումներում հազվադեպ չեն տրամաբանական խոսքի խախտումները, հատկապես՝ բավարար հիմունքի օրենքի խախտումը, ոչ լրիվ ինդուկցիայի հիմքով ամփոփումը, բառագործածության տրամաբանության խաթարումները և այլն:

Գիտական խոսույթը շարժուն (դինամիկ) երևույթ է, հնից՝ արդեն հայտնի դատողության հիշեցումից անցում դեպի նոր մտքի ձևակերպման: Գիտական խոսույթը չի կարող լինել հանրահայտ մտքերի մեքենայական արձանագրում: Հեղինակից հասցեատիրոջը փոխանցվում են ոչ միայն հայտնի փաստեր, տվյալներ, վկայակոչումներ, մեջբերումներ, այլ նաև (պարտադիր կերպով) որոշակի նորույթ: Գիտական հաղորդակցման հասցեատերերի հիմնական ակնկալիքը հենց դա է՝ նորույթը, այնուհետև դրա գնահատումը՝ ըստ տվյալ գիտության մեջ տվյալ պահին կայունացած որոշակի չափանիշների:

Գիտական խոսույթն անհնար է պատկերացնել առանց հեղինակությունների վկայակոչման, տարատեսակ մեջբերումների: «Ոսկի միջինի» կանոնն այստեղ ևս հրամայական է: Հոդված լինի, թե մենագրություն, գիտաժողովի զեկուցում, թե ատենախոսության պաշտպանություն, միևնույն է, այս կամ այն հեղինակությունը չի կարող փոխա-րինել հեղինակի սեփական մտքին: Գերառատ մեջբերումներն անխուսափելիորեն վնասում են սեփական մտքի մատուցմանը, և երբեմն դա պարզապես սկսնակ հեղինակի փորձառության պակասի հետևանք է: Մեջբերման, հղումի, ծանոթագրության տեղին ու պատշաճ գործադրումը, ուրիշի և սեփական խոսքի ներհյուսումը, այսպիսով, գիտական աշխատանք կատարելու անհրաժեշտ հմտություններից են:

Շատ կարևոր է «պարզության» և «հստակության» պահանջների ճիշտ ըմբռնումը: Գիտական աշխատանքի մատուցումը կարող է ինքնին շատ պարզ լինել, այսինքն՝ ծանոթ և հասկանալի բառերով, առանց բարդ ձևակերպումների, սակայն միտքը՝ ոչ հստակ: Ավելին՝ հնարավոր է, որ պարզիպարզ մատուցված գրվածքը սոսկ քողարկում է ասվածի անմտությունը: Կարելի է տարբերակել հետևյալ կերպ. գիտական խոսույթի հստակությունը մտքի բովանդակության բնութագիրն է, իսկ պարզությունը՝ շարադրանքի ձևակերպման: **Պարզությունը միջոց է հստակությունն ապահովելու:** Իսկապես «պարզ» պիտի կոչենք գիտական եզրահանգումների այն ձևակերպումը (որ-քան էլ արտաքուստ բարդ), որն ապահովում է գիտական մտքի հստակ մատուցում:

Արդ, հեղինակի լեզուն մի յուրատեսակ կամուրջ է, որով նա սեփական մտքերը կապում-միացնում է գետի մյուս ափին գտնվող ընթերցողի ընկալմանը: Կամուրջը պիտի հուսալի լինի, ներշնչի վստահություն, որ կարելի է քայլել և տեղ հասնել:

2. ՎԵՐՆԱԳԻՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄ

«Գիտական աշխատանքի տեխնոլոգիան» գրքում ակադեմիկոս Գ. Բրուտյանը շատ պատկերավոր է բնութագրել ատենախոսության վերնագրի կարևորությունը. «Վերնագիրը կարելի համեմատել այն դռների հետ, որոնք բացվում են հյուրերի առջև և որոնք շատ բան են ասում դռների հետևում գտնվող կառույցի բնույթի, նշանակության և վիճակի մասին» [10, էջ 30]:

Իրոք, դիպուկ համեմատություն է. ինչպես դռներն են տարբեր, այնպես էլ վերնագրերը, բայց պահանջը միասնական է՝ ուրվագծել ներսում եղածը, հեղինակի խոստումը և, բուն իսկ ձևակերպմամբ, գրավել ընթերցողի ուշադրությունը:

Չմոռանանք, որ դեպի գիտական աշխատանքի ներաշխարհ տանող այլ «դռներ» էլ կան: Դրանցից է «Անտացիան», որ գրքի երկրորդ էջում է տեղադրվում և առավել սեղմ տեղեկացնում ընթերցողին գրքի էության և հնարավոր կիրառության մասին:

Հաջորդ դուռը «Բովանդակությունն» է, որ հիմնականում լինում է գրքի վերջում, բայց կարող է լինել նաև սկզբնամասում, առաջաբանից կամ հրատարակչական նախաբանից անմիջապես հետո: Հաջող «բովանդակությամբ»՝ գրողը ընթերցողին տրամադրում է մի յուրատեսակ բանալի՝ բոլոր դռները միանգամից բացող: Համոզվելու համար փորձեք կարդալ որևէ գիրք՝ առանց նախապես ծանոթանալու դրա բովանդակությանը և կհամոզվեք, որ... սխալ եք կարդում, ոչ արդյունավետ:

Որքան էլ տարօրինակ է հնչում, գիտական աշխատությունը ճիշտ կարդալուն շատ է օգնում վերջին «դուռը»՝ ամփոփիչ մասը: Հմուտ հեղինակն անպայման ամփոփում է ասելիքը. նա ճանապարհ է անցել, ենթադրվում է՝ ընթերցող(ներ)ի ուղեկցությամբ, ահա ուր որ է հասնելու է ավարտին, ուստի հետադարձ մի հայացքով անցած ուղին է ամփոփում, ինքն իրեն և ընթերցող(ներ)ին հիշեցնում, թե որտեղից սկսեցին և ո՛ր հասան (ինչ էր խոստացել և որքանո՞վ կատարեց խոստումը՝ գոնե այս պահին):

Իհարկե, «դռները» մենք բացում ենք որպես ընթերցող: Բայց մեր գործը հեշտացնողը, «դուռ բացելը» դյուրացնողը մենք չենք, այլ հեղինակը. վերհիշենք «գրողը պետք է օգնի ընթերցողին» իմաստուն խորհուրդ-պահանջը: Արդ, գիտական աշխատության վերնագիրը, անտացիան, բովանդակությունը, ամփոփումը, ինչպես նաև կառուցվածքային մյուս տարրերի լեզվական ձևակերպումները պետք ենթարկվեն այդ պահանջին:

Հավելենք, որ վերջին տարիներին գիտական ամսագրերում և ժողովածուներում հրապարակումներն ունեն լրացուցիչ «դռներ»՝ այլալեզու ամփոփումներ և, այսպես կոչված՝ «հիմնաբառեր». դրանք մի քանի հանգուցային բառեր են, որ դարձյալ պիտի օգնեն ընթերցողին կողմնորոշվելու և հավաստի ընկալելու մատուցված նյութը: Ի դեպ, անգլերեն «Key words» բառակապակցությունը ռուսերեն գրականության մեջ գործածվում է «ключевые слова» ձևով, մեր որոշ ամսագրեր պատճենել են որպես «բանալի բառեր»: Սա սխալ է. ճիշտը չեզոք բնութագրումն է՝ «հիմնական» կամ «հանգուցային բառեր», ըստ իս՝ գերադասելի է կցական «հիմնաբառեր» ձևը:

Ինչևէ, խոսենք դռների արտաքինի, այսինքն՝ վերնագրի ձևակերպման մասին: Ահավասիկ ենթազուլիսների մի քանի վերնագիր ուսումնական մի ձեռնարկից.

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶ-
ԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԱՏԱՐ ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵ-
ՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԱՆԳԼԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԸ ԴԻՏԱՐԿ-
ՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ՖԵՌԴԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱ-
ՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

ԽՍՀՄ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵ-
ՐԱԶՄԻ ԵՎ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱ-
ՇՐՋԱՆՈՒՄ

Ահա այսպես՝ տողադարձված վերնագրեր, ինչն արդարացված չէ ոչ մի կերպ՝ ո՛չ տեղի խնայողության, ո՛չ մեկ այլ նկատառումով: Դռներ, որ չեք էլ ուզում բացել: Բայց ամենավատն այն է, որ այսօրինակ գրվածքը ուսանողներին է մատուցված, ուստի ակամա ընդօրինակման վտանգը բացառված չէ:

Ինչպես վերնագրերը, այնպես էլ գիտական աշխատության կառուցվածքը ևս կարևոր բանալի են, որ փորձառու հեղինակը տրամադրում, դրանով իսկ՝ օգնում է ընթերցողին:

Ահա թե ինչ պահանջներ են ներկայացվում գիտական աստիճան ստանալու համար կատարվող աշխատության՝ ատենախոսության կառուցվածքին՝ ըստ ՀՀ ԲՈՀ-ի հրահանգի. «Ատենախոսությունը պետք է ունենա հետևյալ բաղադրիչ մասերը՝ սահմանված ձևի տիտղոսաթերթ, բովանդակություն, առաջաբան կամ ներածություն՝ ներառելով ատենախոսության հիմնական դրույթները, տեքստ՝ առանձին գլուխներով, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ, անհրաժեշտության դեպքում՝ գիտագործնական երաշխավորություններ կամ առաջարկներ, հավելված, նշանակումների, հապավումների, միավորների և տերմինների ցանկ»:

Մենագրությունների կառուցվածքը ևս մոտավորապես այդպիսին է: Առաջաբանը (կամ նախաբանը), ինչպես հուշում է ստուգաբանությունը, հեղինակի խոսքն է մինչև բուն ասելիքը՝ առաջաբան. գիրք գրելու նկատառումները, թեմայի կարևորությունը, մշակվածության աստիճանը, երբեմն՝ երախտագիտական խոսք. անգլերեն գրականության մեջ այս հատվածն այդպես էլ վերնագրվում է՝ «Երախտագիտություն» («Acknowledgement»): Ներածությունն արդեն մուտքն է դեպի հարցադրումների և քննարկումների շրջանակ՝ ներածություն:

Սա է ավանդական (և լիովին տրամաբանական) սկիզբը: Ի դեպ, այդպիսին է նաև ռուսերեն գրականության մեջ՝ «Предисловие» և «Введение»: Իսկ անգլերենում՝ «Preface» և «Introduction»:

Կան այլ մոտեցումներ: Հանդիպում է փոքր-ինչ տարօրինակ վերնագիր-մուտք՝ «Հեղինակի կողմից»: Ակամա հարց է առաջանում. իսկ մնացած տեքստը, հիմնական նյութը մի՞թե ուրիշի «կողմից» է:

Ավելի տարածված է «Երկու խոսք» անվանմամբ վերնագիր-մուտքը՝ առաջաբանից անմիջապես առաջ կամ դրա փոխարեն: Սովորաբար դա մեկ-մեկուկես էջ է և ներառում է հենց առաջաբանին պատշաճ ասելիք: Բայց ինչո՞ւ «Երկու» խոսք: Այդ նյութը լինում է մեկ ամբողջական խոսք: Սա մեր լեզվում խորապես արմատավորված (դասական հեղինակների գրքերում էլ է հանդիպում, բայց դրանից ավելի ընդունելի չի դառնում) ռուսաբանություն է. ռուս հեղինակը կարող է ասել «երկու բառ» («մի քանի բառ»), բայց շարադրել երկու կամ հարյուր երկու բառ. միևնույն է, դա մեկ խոսք է: Ինչպես, ի դեպ, մեկ խոսք է ամբողջ գիրքը, հողվածը, ելույթը:

3. ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԼԵԶԿԱՏՐՈՄԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

Ճշտենք, որ գիտական աշխատության լեզվատրամաբանական համարժեք մատուցման խնդիրը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ: Իրենց տեղն ու դերն ունեն նաև շարադրանքի կառուցվածքը, և՛ գիտական ոճի պատշաճության պահպանումը, և՛ վերնագրերի ձևակերպումները, և՛ հիմնախնդրի ստույգ առաջադրումը, և՛ սահմանումների հստակությունը, և՛ ներտեքստային կապերի ապահովումը, և՛ փաստարկման եղանակների համակարգը, և՛ եզրակացությունների ու գիտական նորոյթի (հատկապես՝ ատենախոսությունների դեպքում) հիմնավորվածությունը: Ավելին՝ որոշակի նշանակություն ունեն նաև արտաքուստ արտատրամաբանական բնույթի հանգամանքները. հեղինակի մտադրության համարժեք մատուցմանը կարող են վնասել բառապաշարի աղքատությունը, ոճական անհարթությունները, շարահյուսական և ուղղագրական սխալները, տողադարձի խաթարումները, սրբագրական վրիպակները, անգամ անհաջող ընտրված տառատեսակն ու տառաչափը, գրքի կամ հոդվածի ձևաչափը, ընդհանուր տեսքը: Ինքնին հասկանալի է, որ բանավոր խոսքի մատուցման պարագայում՝ գիտական զեկուցման, ատենախոսության պաշտպանության, քննարկումների, բանավեճերի ժամանակ կարևորվում են հեղինակի ճարտասանական հմտությունները՝ խոսքի մատուցման համարժեք ոճը, ճիշտ կառուցվածքը, փաստարկելու կարողությունը, լսարանի հետադարձ կապի պատշաճ հաշվառումը, հարցուպատասխանի արվեստը, խոսքի հնչեցման տեխնիկան, ժամանակի կառավարումը և այլն: Թվարկված հանգամանքները, իհարկե, միևնույն կշիռը չունեն, բայց դրանց միավորում է մեկ բան՝ բոլորն էլ հեղինակի հսկողությանն են ենթարկվում, ուստի բոլորն էլ կարող են վկայել սեփական խոսքի հանդեպ հեղինակի պատասխանատվության չափի մասին. կատարելության ձգտող հեղինակը ոչինչ աչքաթող չի անի: Մնացյալն արդեն ընթերցողի խնդիրն է...

3.1. Սահմանման տրամաբանությունը

«Չափազանց նեղ կամ չափազանց լայն սահմանումներ տալը սխալ է, այն էլ՝ կոպիտ սխալ»․ այսպես է բացատրում հին հույն առակախոս Եզոպոսը՝ ցույց տալով փիլիսոփա տիրոջը՝ Քսանթոսին նրա անմիտ բժախնդրության սնանկությունը: Տերը ստրուկից պահանջում է անվերապահ հնազանդություն. «Կատարիր միայն այն, ինչ որ հրամայված է. ո՛չ ավել, ո՛չ պակաս, թե չէ դրանից լավ բան չի ստացվի»: Եվ ահա, Քսանթոսը հրամայում է վերցնել սրվակը և սրբիչը, բայց բաղնիքը հասնելով պարզում է, որ սրվակը դատարկ է: Ի պատասխան՝ Եզոպոսն ասում է, թե տերն իրեն չէր ասել, որ սրվակը պետք է յուղ լցնել: Իսկ երբ Քսանթոսը պահանջում է բերել ոտքեր լվալու լազանը, Եզոպոսը բերում է չոր լազանը և չքմեղանում, թե իրեն չէր ասվել նաև ջուր լցնելու մասին [16, էջ 28–31]: Այսպես իմաստուն ստրուկը ծաղրում է փքված իմաստակին, նաև հընթացս կարևոր խորհուրդ ձևակերպում սահմանումների արվեստի վերաբերյալ, մի արվեստ, որին տիրապետելն անհրաժեշտ է, անտարակույս, բոլորիս՝ առհասարակ մարդկանց ամեն տեսակի փոխազդեցության շրջանակներում, բայց պարզապես անփոխարինելի է դառնում գիտական հետազոտության ընթացքի և արդյունքների մատչելի մատուցման համար:

Սահմանումը (դեֆինիցիա) գիտական աշխատության հիմնական բնութագրերից է: Մինչև ինչ-որ խնդրի շուրջ խոսելը, որևէ հիմնախնդիր վերլուծելը, առավել ևս դրա մասին որոշակի նորոյթ հաղորդելը պարտավոր ենք սահմանել հիմնական հասկացությունները. «սահմանել» նշանակում է սահմանազատել քննարկելիքն այն ամենից, ինչն այս պահին դուրս է մնում հետազոտությունից:

Գիտական քննարկման առարկա կարող է դառնալ ամեն ինչ՝ ամենաընդգրկուն թեմայից մինչև որևէ փոքր հարցի ճշգրտում: Համաշխարհային տնտեսության զարգացման հիմնարար օրինաչափությունների համալիր ուսումնասիրություն լինի, թե ատամի մածուկի նոր տեսակի ազդեցության բնութագրում՝ գիտական հրապարակումը սկսվում է սահմանումից: Վերջինիս բացակայությունը կամ անհստակությունը հեղինակին կարող է մտցնել փակուղի, շեղել թեմայից, հանգեցնել տեղապտույտների, տրամաբա-

նական տարատեսակ սխալների: Մասնագիտական գրականության մեջ սահմանումների հանդեպ անհոգության և դրանից ծագող բարդությունների հանգամանքն է արձանագրում կանադացի կառավարաբան Լեսլի Փայլը. «Հիմնախնդրի սահմանման զավեշտը կապված է այն բանի հետ, որ չնայած դա հանրային քաղաքականությունը բացատրելու կարևոր կողմն է, հենց քաղաքականության սահմանման մեջ դրա մասին հազվադեպ է շատ մանրամասն նշվում: Որոշակի շահեր ունեցող խմբերն ու լրատվամիջոցները զգալի ժամանակ են ծախսում վիճաբանելով հիմնախնդրի սահմանումների և պատճառային գործոնների շուրջ, և կառավարությունները չեն կարող խուսափել նրանից, որպեսզի իրենց նախարարությունները կամ այլ մարմինները սպառիչ վերլուծություններով հաճախ հիմնավորեն իրենց քաղաքականությանն առնչվող արձագանքները» [30, էջ 23]:

Ընդհակառակը, սահմանման պարզեցումը (կամ, գոնե, դրա փորձը) ոչ միայն դյուրին է դարձնում հեղինակի վերլուծական աշխատանքը և հիմնավոր՝ ամփոփիչ եզրակացությունը, այլև այն պարտականություններից մեկն է, որն ազդարարում է կարգախոսը. «Գրողը պետք է օգնի ընթերցողին»:

Սահմանման էության և տեսակների մասին հանգամանորեն խոսել է հայ մեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթը: «Փիլիսոփայության սահմանումները» երկասիրության մեջ, մինչ եղած սահմանումները բնութագրելը և դասդասելը, նա հարկ է համարում նախապես քննարկել «սահմանման սահմանումը», իսկ որպես այդպիսին տալիս հետևյալ ձևակերպումը. «Սահմանումը հակիրճ խոսք է, որը բացահայտում է ենթակա իրի բնությունը»: Անհաղթը տարբերում է նաև «անվան» սահմանումը. «...անունը ևս սահմանում է ենթակա իրի բնությունը... Այն, ինչ սահմանումն անում է շատ բառերի օգնությամբ, անունն անում է մեկ բառի միջոցով» [3, էջ 49]:

Սահմանումների այս երկու տեսակի նպատակը նույնն է՝ երևույթի բացատրությունը: Գիտական հրապարակումներում հիմնականում տրվում են հասկացությունների սահմանումներ (իրական սահմանում, real definitions), սակայն հանդիպում են նաև *անվան* (նոմինալ, nominal definitions) սահմանումներ: Վերջինս այն դեպքն է, երբ հեղինակը ընթերցողին հիշեցնում է իր գործածած

բառի որևէ հոմանիշ, որը, ենթադրաբար, ավելի ծանոթ պիտի լինի ընթերցողին: Օրինակ՝ «գործազուրկ» – «աշխատանքից զուրկ», «կաթնաթույր» – «կաթի գույն ունեցող», «համապաշարել» – «բլուկադայի ենթարկել» [1, էջ 256, 668, 803]:

Նույն հասկացությունների իրական, նախադասության ձևով սահմանումը (sentence definitions) արդեն ենթադրում է տվյալ բառով նշանակվող առարկայի էության բնութագրում. «Գործազուրկ – անհատ, որը ներկա պահին զբաղված չէ, բայց նպատակասլաց ձևով աշխատանք է փնտրում» [19, էջ 114]:

Որպես անվանական սահմանումներ պիտի դիտարկել նաև դեպքերը, երբ հայերեն որևէ բառ գործածելիս հեղինակը փակագծում, «հընթացս» (մասնագիտական գրականության մեջ առանձնացվում է «parenthetical definitions» անվանումով) հարկ է համարում հիշեցնելու դրա օտար համարժեքը: Օրինակ՝ «Ուղերձը յուրօրինակ գրական ժանր է, չափածո նամակ (послание), որը մի ժամանակ շատ տարածված է եղել» [25, էջ 316]:

Բացատրական բառարանների սահմանումներում (*բառարանային սահմանումներ*, dictionary definitions) համադրվում են երկու հիմնական մոտեցումները: Օրինակ՝ «լիազորություն» եզրը բացատրելիս հեղինակները նախ կատարում են անվանական սահմանում, այսինքն՝ տալիս են օտարալեզու համարժեքները՝ ռուսերեն և անգլերեն («полномочие», «power of attorney»), ապա՝ ընդարձակ սահմանումը. «Մեկ անձի (ներկայացուցիչ) իրավունքը այլ անձի (ներկայացվողի) անունից գործարքներ իրականացնելու համար» [19, էջ 175]:

Անվանական սահմանումը երբեմն զուգակցվում է *ստրուգարանական պարզաբանմամբ*. «Կրիպտոմեզիա (криптомезия, հուն. kryptós – գաղտնի, mnémé – հիշողություն) – հիշողության խանգարում, որի դեպքում մարդը դժվարանում է իրականում տեսած, ընկալած իրադարձությունները տարբերել լսածից, կարդացածից կամ կինոյում և թատրոնում տեսածից» [23, էջ 109]:

Սահմանումները կարող են լինել նաև *պայմանական* (stipulative definitions), երբ հեղինակը որևէ երևույթի նախնական, իրավիճակային, հանգրվանային ինչ-որ ըմբռնում է առաջարկում՝ խոստանալով վերլուծության ավարտին արդեն ստույգ ձևակերպում տալ:

Օրինակ Լ. Փալի գրքից. «Սույն գրքում «քաղաքականության վերլուծությունը» սահմանվում է որպես հանրային հիմնախնդիրների նկատմամբ մտքի կարգավորված կիրառում» [30, էջ 33]: Երբեմն հեղինակը շարադրանքն ուղղակի սկսում է՝ պայմանավորվելով ընթերցողի հետ, թե ինչ եղանակով է տալու խնդրո առարկայի սահմանումը: Այդպես են վարվել ԱՄՆ-ի Մայամիի համալսարանի հոգեբաններ Էնն Ֆրայմիրը և Մարջրի Նեդլերը իրենց ծավալուն «Համոզում» մենագրության հենց առաջին էջում. «Մինչ այս գրքում գործածվող սահմանումը տալը, եկեք քննարկենք դրա հիմնական առանձնահատկությունները, ինչը կօգնի ձեզ հասկանալու, թե ինչու ենք մենք համոզումը սահմանում հենց այս եղանակով» [42, էջ 4-5]:

Երբեմն հեղինակը պարզապես հնարավորություն չի ունենում սկզբից ևեթ հստակ սահմանումներ տալու. այդ դեպքում նա որոշակի վերապահում է անում, դիմում ընթերցողին՝ բացատրելով իր կացությունը և առաջարկելով զինվել համբերությամբ ու հետևել շարադրանքին: Այսպես՝ անգլիացի մաթեմատիկոս և փիլիսոփա Բերտրան Ռասելը, ձեռնամուխ լինելով մարդկային իմացության առանձնահատկությունների, ընկալման տիրույթի և սահմանափակումների քննարկմանը, սկսում է այն բարդության արձանագրումից, թե ինքը գործածելու է «իմացություն», «ճշմարտություն», «ընկալում» և «հավատ» հասկացությունները, որոնց առտնին գործածությունը, սակայն, այնքան էլ հստակ ու ստույգ չէ. «....իսկ քանի որ դրանց փոխարինող ավելի ստույգ բառեր չկան, ուստի, անխուսափելիորեն, ներկա հետազոտության սկզբում ասվածը զգալիորեն զիջելու է այն բանի դիրքերից, ինչին հուսով եմ հասնելու ավարտին»: Բ. Ռասելն այս միտքը շատ պատկերավոր է ամփոփում. «Հետևաբար՝ սկզբում ասվածը պետք է այնուհետև ճշտվի: Մարգարեն ասել է, թե եթե դուրանի երկու տեքստ անհամատեղելի են, ապա վերջինը պետք է դիտարկվի որպես առավել հեղինակավոր: Թող ընթերցողը նմանօրինակ սկզբունքը գործադրի նաև այս գրքում ասվածը մեկնաբանելիս» [45, էջ 7-8]:

Մեկ այլ հիմքով սահմանումները տարբերակվում են *բացահայտ* (explicit definitions) և *ներակա* (implicit definitions) տեսակների. առաջինը սահմանվող հասկացության բացորոշ պարզաբա-

նումն է (մեծավ մասամբ այդպիսին են վերորբերյալ սահմանումները), իսկ երկրորդ դեպքում սահմանումն ուղղակի և անմիջապես չի տրվում, այլ աստիճանաբար, հեղինակի դատողությունների ծավալման ընթացքում կամ առհասարակ անուղղակիորեն բխում է դրանց համատեքստից: Այդպես է վարվում նույն Բ. Ռասելը մեկ այլ աշխատության առաջաբանում. «Ամենից առաջ, ես կփորձեմ նախնական բացատրություն տալ, թե ինչ եմ հասկանում «փաստ» ասելով: Խոսելով փաստի մասին՝ ես չեմ առաջարկում ստույգ սահմանում, բայց կփորձեմ այնպես բացատրել, որ ձեզ համար պարզ դառնա, թե ինչի մասին է խոսքը» [38, էջ 7]:

Առաջադրված հիմնախնդրի ընդհանուր պարզաբանման համար հարկ է լինում նաև տարբերակել ելակետային հասկացության «նեղ» և «լայն» իմաստները: Այդպես է սկսում շվեյցարացի կառավարաբան Ժան-Էրիկ Լեյնը. «Նոր հանրային կառավարման ըմբռնումը ունի նեղ և լայն իմաստ» [44, էջ 184]: Այդպես է վարվում Պարույր Քալանթարյանը «Արտադրության կազմակերպում» գրքում. «Սոցիալական կազմակերպման հասկացությունը, իր լայն իմաստով, բնութագրում է սոցիալական խմբերի և առանձին անհատների գործողությունների կանոնավորման և կարգավորման եղանակները.... Իր նեղ իմաստով սոցիալական կազմակերպման հասկացությունը ենթադրում է համատեղ և համաձայնեցված գործողություններ պահանջող ու դեպի նախապես ամրագրված ինչ-որ նպատակի կողմնորոշված մարդկանց հարաբերականորեն առանձնացված և որոշակի ինքնավարություն ունեցող խմբի առկայություն» [32, էջ 13]:

Որևէ հասկացություն սահմանելիս մենք պատասխանում ենք «ինչ է» հարցին. պարզաբանում, հստակեցնում ենք, թե հատկապես ինչն ենք կտրում-առանձնացնում, բառի ստույգ իմաստով՝ «սահմանազատում» մնացած ամենից: Օրինակ՝ Դեյվիդ Վեյմերը և Էյդեն Վայնինզը, փորձելով սահմանել «քաղաքականության վերլուծություն» հասկացությունը, իրենց գրքի համապատասխան գլուխն այդպես էլ վերնագրում են՝ «Ի՞նչ է քաղաքականության վերլուծությունը»: Ուշագրավ է նաև սահմանում տալու նախնական հիմնավորում-պարզաբանումը, որով դյուրին է դառնում ընթերցողի ընկալումը. «Հաշվի առնելով այս նկատառումները՝ ջանացել

ենք տալ հետևյալ պարզ սահմանումը. «քաղաքականության վերլուծությունը» պատվիրատուի համար նախատեսվող խորհրդատվություն է, որը վերաբերում է պետական որոշումներին և հիմնվում է սոցիալական արժեքների վրա» [28, էջ 37]:

Նույն հեղինակների օրինակով կարելի է դիտարկել սահմանում տալու մեթոդական մի կարևոր պահանջ ևս. դա նույն թեմայի առնչությամբ արտահայտված *այլոց կարծիքների հանդեպ վերաբերմունքն է*: Ընթերցողին տեղյակ պահելով, որ «արդեն գոյություն ունեն քաղաքականության վերլուծության բազմաթիվ սահմանումներ»՝ Վեյմերը և Վայնինգը չեն խուսափում «էլ ինչո՞ւ ներդնել ևս մեկը» հարցից, որի պատասխանն էլ նրանց հնարավորություն է ընձեռում հիմնավորելու սեփական սահմանման շահեկան կողմերը: Հանգամանորեն քննարկելով «շուկա» հասկացության մի շարք ըմբռնումներ՝ Ալբերտ Արշակյանը հստակեցնում է իր անհամաձայնության պատճառը («Շուկայի այսպիսի բնութագրումները թերի են, քանի որ...» [6, էջ 75])՝ հիմնավորելով սեփականն առաջարկելու հանգամանքը:

Չկա, թերևս, գիտական որևէ հիմնախնդիր, որի մասին մեզանից առաջ որևէ կարծիք արտահայտված չլինի, ուստի և բացահայտ կամ ներակա սահմանում տրված չլինի: Ինչպե՞ս վարվենք: Դժվար թե ընդօրինակելի է գերմանացի տրամաբան Լյուդվիգ Վիտգենշտայնի գրքերից մեկի առաջաբանում արտահայտված մոտեցումը. «Ես չեմ հենվում ոչ մի սկզբնաղբյուրի վրա, քանի որ ինձ համար էական չէ, թե ինձնից առաջ ինչ-որ մեկը մտածել է այն, ինչ որ ես» [33, էջ 4–5]: Ընդհակառակը, գիտական աշխատությունները շատ են աղքատանում առանց տվյալ հիմնախնդրի նախընթաց մեկնաբանությունների թեկուզ հակիրճ ակնարկի: Հակիրճ լինի, թե ընդարձակ այդ ակնարկը՝ հեղինակը պարտավոր է վերաբերմունքը հստակեցնել. նա կա՛մ համերաշխություն է հայտնում որևէ տեսակետի կողմնակցի հետ (սեփական հետագա շարադրանքը համարելով դրա լրացում, ճշգրտում, խորացում), կա՛մ էլ (մասնակի կամ արմատական անհամաձայնություն հայտնելով) հիմնավորում միանգամայն նոր սահմանում տալու անհրաժեշտությունը: Վերջապես, չմոռանանք ընթերցողի մասին. նրա համար անհասկանալի է մնում, թե ի՞նչ նոր բան է ասվելու: Դե, իսկ գի-

տական ատենախոսությունների համար հիմնախնդրի «մշակվածության աստիճանի» որոշակի լուսաբանումը կանոնակարգային պարտադիր պահանջ է:

Ինչ վերաբերում է սահմանման շարադրանքին, ապա դա հնարավոր է անել երկու եղանակով.

- ❖ *էությունական* (ատրիբուտիվ, attributive) սահմանում. առանձնացվում է երևույթի, առարկայի խորքային բնութագիրը՝ հիմնական նշանակությունը՝ «գոյության իմաստը»,
- ❖ *նկարագրական* (դեսկրիպտիվ, descriptive) սահմանում. թվարկվում են էության արտաքին դրսևորումները, ավելի մեծ համակարգի մեջ դերակատարումները՝ գործառույթները:

Առաջին եղանակի օրինակներ վերը շատ հանդիպեցին: Դրանք բնորոշ են հատկապես հանրագիտարանային բառարաններին. «Դեիզմ – ուսմունք, որն ընդունում է աստծու գոյությունն իբրև աշխարհի անդեմ սկզբնապատճառի» [31, էջ 104]: «Ամուսնութիւն – ցկեանս միաւորութիւն առն և կնոջ» [8, էջ 30]: «Աշխատավարձ – վարձու աշխատողի եկամտի տարր, իր աշխատանքային կարողությունը տնօրինելու իրավունքի իրականացման տնտեսական ձևը» [39, էջ 147]: Հիմնականում ատրիբուտիվ սահմանումների են հակված համացանցային առցանց բառարանները. «Ֆորդիզմ – արտադրական փիլիսոփայության տեսակ, որը ձգտում է առավելագույն արտադրողականության՝ արտադրանքի ստանդարտացման, հարահոսային գծերի օգտագործման և աշխատանքը որակավորում չպահանջող մանր գործողությունների տրոհման միջոցով» [48]: «Ալյասիրություն (ալտրոիզմ) – սոցիալական վարք և արժեքային կողմնորոշում, երբ անհատն առաջնությունը տալիս է այլ անհատների, խմբի մյուս անդամների կամ ամբողջ հանրության շահերին» [47]:

Երկրորդ՝ սահմանման նկարագրական եղանակն է գործադրում, օրինակ, հոլանդացի լեզվաբան Թուն վան Դեյքը. միջանձնային խոսքային հաղորդակցման «սոցիալական ենթատեքստ» հասկացության տարատեսակների քննարկումը նա (թերևս, առժամանակ խուսափելով դրանց չափազանց նեղ մեկնաբանումից) սկսում է հետևյալ վերապահությամբ. «Մենք այստեղ այդ հասկա-

ցությունների ստույգ սահմանումը չենք տալիս: Կարևոր է միայն ընդգծել, որ դրանք բնութագրում են սոցիալական ենթատեքստերի զանազան տեսակներ, այդ թվում, օրինակ՝ հանրային հաստատությունները (դատարաններ, հիվանդանոցներ, ճանապարհային երթևեկ), ոչ պաշտոնական հանրային «վայրերը» (ավտոբուսի սրահ, ռեստորաններ), մասնավոր հաստատությունները (ընտանիք), չձևայնացած անձնային «իրավիճակները» (ծեծկոտուք, սիրո խոստովանություն) և այլն» [35, էջ 23]:

Ըստ Դ. Անհադթի՝ «նկարագրական սահմանումը խառնակ է» [3, էջ 52]: Իսկապես, եթե էութենական սահմանումը բյուրեղացնում-ներառում է երկույթի խորքային (սուբստանցիալ) հատկանիշները, ապա նկարագրականը ոչ միայն հնարավոր է լրիվ չներառի երկույթի հիմնական բնութագիրը, այլև որպես այդպիսին ընկալի իրականում դրա ոչ էական, անզամ պատահական հատկությունները:

Ժամանակակից տրամաբանության մեջ սահմանումներին հիմնականում առաջադրվում են հետևյալ պահանջները:

Առաջին պահանջը (համարակալումը պայմանական է) սահմանման պարզ, հստակ լինելն է՝ զերծ փոխաբերություններից, համեմատություններից, ոճական և հուզական այլ տարրերից: Սահմանմանն անհարիր են թերասացությունը, ակնարկությունը, զեղչումը, առհասարակ հեղինակի մտադրությունը (ինտենցիան) մթազնոդ լեզվական որևէ ավելորդություն կամ շեղում (հիշենք «չափազանց նեղ կամ չափազանց լայն» սահմանումների մասին եզրպոսյան վերոբերյալ զգուշացումը):

Երկրորդ պահանջը վերաբերում է սահմանման համաչափության պահպանմանը: Սահմանման երկու մասերը, այսինքն՝ սահմանվող հասկացությունը (դիցուք՝ «բնական աճի գործակից») և վերջինիս բացատրությունը («որոշակի ժամանակահատվածի համար ծննդյան և մահվան թվերի տարբերություն՝ հարաբերած նույն ժամանակահատվածում բնակչության ապրած միջին տարիների քանակին» [18, էջ 4-5]) պետք ծավալով համընկնեն: Հակառակ պարագայում մեր սահմանումը կլինի կամ ավելի նեղ, կամ ավելի լայն և հետագա դատողությունների ընթացքում մեզ պիտանի չի լինի:

Երրորդ պահանջը սահմանման մեջ շրջապտույտից խուսափելն է. սա մի վիճակ է, երբ ինչ-որ հասկացություն սահմանում ենք երկրորդ հասկացության միջոցով, մինչդեռ այս երկրորդ՝ սահմանող հասկացությունը, իր հերթին, սահմանում ենք առաջինի միջոցով: Արտաքուստ մենք դատողություններ ենք անում, մինչդեռ իրականում ոչինչ չենք սահմանում, քանի որ սահմանվողը ինքն սահմանողի սահմանումն է:

Չորրորդ պահանջը կրկնաբանությունից (նույնաբանությունից) խուսափելն է. սա նման է նախորդին, միայն այստեղ հենց սահմանվողն է կրկնվում որպես սահմանող հասկացություն. նույնը նույնով՝ լատիներեն՝ «Idem per idem»:

Հինգերորդ պահանջը սահմանման հաստատական բնույթն է. ցանկալի չեն ժխտական սահմանումները: Չէ՞ որ սահմանումն այն տրամաբանական գործողությունն է, որի ընթացքում սահմանվող հասկացությամբ նշվող առարկային սահմանող հասկացությունների միջոցով վերագրվում, հաստատվում, ամրագրվում են որոշակի հատկություններ, ուստի, որպես կանոն, իմաստ չունի հակառակ գործողությունը, այսինքն՝ որոշակի հատկությունների ժխտումը:

Այս պահանջները բնավ էլ պատահական չեն. դրանց հիմքում տրամաբանական մտածողության հիմնական օրենքներն են: Պահանջները յուրատեսակ կանոններ են, որոնց հետևելով, մեր խոսքը դարձնում ենք հետևողական և համոզիչ: Համաչափության պահպանման կանոնը, օրինակ, պահանջելով սահմանվող և սահմանող հասկացության ծավալների հավասարություն, ուղղակի բխում է «նույնության» օրենքից:

Արդ, հետագա վերլուծության դյուրության համար ամփոփի հիշեցնենք **տրամաբանական մտածողության հիմնական չորս օրենքները.**

- ❖ Ըստ «նույնության» օրենքի (Law of identity, закон тождества)՝ խոսքի ընթացքում գործածվող ամեն մի հասկացություն, արտահայտություն, սահմանում, բնորոշում պիտի նույնը մնա՝ գործադրվի որոշակի և անփոփոխ իմաստով, դրանով իսկ ապահովելով դատողության որոշակիությունը: Այս պահանջը չբավարարող խոսքը, բնականաբար, ոչ միայն զուրկ է ապացուցողական ուժից, այլև համոզությունից:

❖ «Հակասության» օրենքը (ճիշտ է նաև «անհակասականություն» բնութագրումը, Law of non-contradiction, закон противоречия) սահմանում է, որ խոսքի ընթացքում միևնույն առարկային միևնույն առումով վերաբերող երկու հակադիր դատողությունները միաժամանակ ճշմարիտ լինել չեն կարող (թեպետ կարող են միաժամանակ սխալ լինել): Սա նշանակում է՝ հեղինակը չպետք է ինքն իրեն հակասի. անպայման կլինի գեթ մեկ ընթերցող՝ ունակ արձանագրելու մտքի հակասականությունը:

❖ Մասնավորելով նախորդը՝ «երրորդի բացառման» օրենքը (Law of excluded middle, закон исключения третьего) ապահովում է խոսքի տրամաբանական հետևողականությունը, այն է՝ երկու հակասական դատողություններից մեկն անպայման ճիշտ է, մյուսը՝ սխալ, և երրորդ գոյություն ունենալ չի կարող (Tertium non datur, третьего не дано): Եթե հեղինակը չի կարողանում կողմնորոշվել երկու ներհակ դատողությունների միջև (կամ քողարկում է իր դիրքորոշումը ինչ-ինչ պատճառներով), ապա նրա խոսքը տրամաբանորեն խոցելի է և չի համոզում հասցեատիրոջը:

❖ Վերջապես՝ «բավարար հիմունքի» օրենքը (կոչվում է նաև «սկզբունք», Principle of sufficient reason, принцип достаточного основания) պահանջում է, որ ամեն մի դատողություն, եզրակացություն ունենա տրամաբանական հիմնավորվածություն, այսինքն՝ ոչ թե շինծու, բռնազբոսիկ, կամաձին լինի, այլ անհրաժեշտաբար բխի նախադրյալներից:

Գիտական աշխատությունների լեզվատրամաբանական համարժեք մատուցմանը կարող են ներկայացվել շատ այլ պահանջներ: Դրանք բոլորը, սակայն, կարելի է ամփոփել մեկ հիմնական պահանջի ձևով՝ հստակություն: Այս պահանջը հրաշալի է ձևակերպել Լյուդվիգ Վիտգենշտայնը. «Ինչի մասին հնարավոր է ասել, պետք է ասվի հստակ, ինչի մասին հնարավոր չէ, հարկավոր է լռել» [33, էջ 1]:

Այս ընդհանուր տեսական դիտարկումներից անցնենք ժամանակակից տնտեսագիտական հրապարակումներում հանդիպող հասկացությունների սահմանումների և հարակից այլ հարցերի քննարկմանը:

3.2. Լեզվատրամաբանական շտկումներ

✓ «Գիտական նորույթը կայանում է հետևյալում... «հարմարվողականություն» հասկացության համակողմանի ուսումնասիրության հիման վրա տրվել է դրա *համապարփակ* սահմանումը»: «Մի շարք հեղինակների կողմից տրվել են հարմարվողականություն հասկացության տարբեր սահմանումներ, որոնց տարբերությունները պայմանավորված են հետազոտության առարկայի առանձնահատկություններով, բայց *սույն աշխատանքի մեջ հարմարվողականության մասին խոսելիս պետք է հասկանալ հետևյալը*. հարմարվողականությունը բարդ միջավայրերում համակարգի նպատակաուղղված, հարմարեցված վարքի դրսևորման ունակությունն է, ինչպես նաև հարմարեցման գործընթաց»:

Առաջին նախադասությունը թեկնածուական ատենախոսության ներածությունից է, որտեղ հեղինակը, ինչպես տեսնում ենք, գիտական նորույթի շարքում նշում է «համապարփակ» սահմանում տալը, երկրորդ՝ նախադասության մեջ («եզրակացությունների» հատվածից), սակայն, ձևակերպումն արդեն հեռու է համապարփակ լինելու հավակնությունից («սույն աշխատանքի մեջ... պետք է հասկանալ»): Ավելին, սահմանումը տրամաբանորեն խոցելի է. նախապես հարկավոր էր սահմանել «հարմարեցում» հասկացությունը (դիցուք՝ համակարգի կայունության վերականգնման ձևով) և նոր միայն սահմանել բուն «հարմարվողականությունը»:

✓ «Դազմավարական *կանխատեսումը* օբյեկտի հնարավոր իրավիճակների *կանխատեսման* այլընտրանքային ուղիների և ժամկետների մասին փորձնական կամ գիտականորեն հիմնավորված փաստաթուղթ է» (բուհական ուսումնական ձեռնարկից):

Ինչպես նախորդ օրինակում, այստեղ ևս կատարված է առարկայի սահմանման տրամաբանական սխալ. փաստորեն ասվում է՝ կանխատեսումը... կանխատեսման մասին է: Այսինքն՝ նույնը նույնով (idem per idem): Դրանից բացի, կանխատեսումը կարող է շարադրվել փաստաթղթի ձևով, բայց չի կարող սահմանվել որպես... փաստաթուղթ: Առաջարկենք ուղղման տարբերակ. «Դազմավարական կանխատեսումը օբյեկտի հնարավոր վիճակների ուրվագծումն է՝ հիմնված փորձի կամ գիտական վերլուծության վրա»:

✓ «Մեր կողմից տրվել է ձեռնարկության մրցունակության համապարփակ սահմանում, ըստ որի ձեռնարկության մրցունակությունը արտաքին միջավայրի փոփոխվող պայմաններում, ելնելով իր ներուժից, շուկայական պահանջարկի առավելագույնս բավարարումն է՝ հիմնվելով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում իր դիրքերի պահպանման ու ընդլայնման ռազմավարության վրա» (թեկնածուական ատենախոսության սեղմագրից):

«Մրցունակություն» բառն իսկ, թեկուզ համագործածական իմաստով, ենթադրում է, ամենից առաջ, համեմատություն, տվյալ ձեռնարկության գործունեության շահութաբերության գնահատում՝ շուկայում միատեսակ ապրանք կամ ծառայություն մատուցող այլ ձեռնարկությունների համեմատությամբ. ահա այս կարևոր բաղադրիչը անտեսվել է «համապարփակ» սահմանման մեջ:

✓ «Տնտեսագիտության սահմանումների շուրջ բանավեճը համարում ենք ձևական և անպտուղ հետևյալը նկատի ունենալով. ցանկացած սահմանում ի վիճակի չէ ներառել երևույթին բնորոշ բոլոր հատկանիշները, ուստի կամա թե ակամա ընտրություն է կատարվում էականի և ոչ էականի, առաջնայինի և երկրորդայինի միջև: Իսկ սահմանման մեջ ներառված հատկանիշների ընտրությունը կախված է նպատակից և գործնական խնդիրներից: Ակնհայտ է, որ հատկանիշների արտացոլումը սահմանման մեջ պակաս կարևոր խնդիր է, քան ինքնին հատկանիշների հանգամանակից վերլուծությունը» (գիտական հոդվածների ժողովածուից):

Դժվար է համաձայնել այսօրինակ՝ «ագնոստիկական» դիրքորոշմանը: Նախ՝ անպտուղ է լինում ոչ թե բանավեճը բառի ստույգ ըմբռնմամբ («բանավեճ» երևույթը համարժեք արտահայտող հասկացությամբ), այլ «վիճաբանությունը», առավել ևս՝ «վեճը», ընդ որում, որպես կանոն, հենց ելակետային չճշտված սահմանումների պատճառով: Բացի դրանից, վերն արդեն նշվեց, որ էութենական սահմանման հեղինակն առհասարակ չի էլ ձգտում հատկանիշների թվարկմանը, իսկ նկարագրական տեսակի սահմանում տվողները, լիովին հասկանալով բարդությունը, սահմանափակվում են երևույթի առավել էական հատկություններով: Օրինակ՝ եթե հարկ լինի սահմանելու, թե ի՞նչ է ավտոմեքենան, առաջին դեպքում կասվի, թե դա փոխադրամիջոց է, երկրորդ դեպքում,

ամենայն հավանականությամբ, կթվարկվեն ներքին այրման շարժիչը, անիվները, թափքը, նստատեղերը, ոչ թե, ասենք՝ դռան բռնակները: Վերջապես, հատկանիշները հանգամանակից քննարկվում են սահմանվող երևույթի էությունն առավել լրիվ բացահայտելու, ուստի և առավել ստույգ սահմանում տալու համար:

✓ «Տնտեսական անվտանգությունը, լինելով ազգային անվտանգության բաղկացուցիչ մաս, կոչված է ապահովելու ազգային անվտանգության պաշտպանությունը» (մենագրությունից):

Շատ կասկածելի է այն անվտանգությունը, որ պաշտպանության կարիք ունի: Իսկ որևէ ամբողջի «բաղկացուցիչը», ուզի թե չուզի, դրա մասն է ու մասը:

Միգուցե այսպես փորձենք հասկանալ ասվածը. «Տնտեսական անվտանգությունը, որպես ազգային անվտանգության բաղկացուցիչ, կոչված է ապահովելու դրա տնտեսական կողմը»:

✓ «Ինչ վերաբերում է տնտեսական զարգացման գործոններին, ապա դրանք հետևյալներն են.

- 1) գիտատեխնիկական առաջադիմությունը,
- 2) հաղորդակցության միջոցներում (լեզու, ճանապարհներ, մամուլ, հեռուստատեսություն, ռադիո, կապի միջոցներ) կատարվող առաջընթացը,
- 3) էներգիայով ապահովվածության աստիճանը և էներգիայի տեսակը,
- 4) բնական (աշխարհագրական) գործոնը,
- 5) ժողովրդագրական գործոնը,
- 6) մարդկանց հոգեբանությունը» (ուսումնական ձեռնարկից):

Այստեղ հեղինակները ինդուկտիվ (մակաձության) եղանակով սահմանել են «տնտեսական զարգացման գործոն» հասկացությունը, այսինքն՝ բացահայտել են սահմանվող հասկացության ծավալի տեսակային բաղադրիչ հասկացությունները: Սեռային «տնտեսական զարգացման գործոն» հասկացությունը բաժանված է տեսակային հասկացությունների, իսկ բաժանման հիմքը դրանցից ամեն մեկով նշանակվող իրողության հատկությունն է՝ որոշակի կերպով ազդելու տնտեսական զարգացման ամբողջական երևույթի վրա: Այսինքն՝ բաժանման հիմքը ոչ թե կամայական է, այլ միանգամայն օբյեկտիվ: Դրանից բացի, բաժանման անդամ-

ներից ոչ մեկը մյուսին չի կրկնում, որևէ չափով մյուսի ծավալը չի ներառում. ասենք՝ ժողովրդագրական գործոնը որակապես տարբեր է գիտատեխնիկական առաջադիմության գործոնից: Ուստի կարող ենք ասել, որ այստեղ հիմնականում պահպանված են այն կանոնները, որ պարտադիր են հասկացության բաժանման համար: Մեր գործածած «հիմնականում» մակբայն արդեն ընթերցողին հուշում է տողերիս հեղինակի վերաբերմունքի մասին. եթե բոլոր կանոններն անխտիր պահպանված լինեին, ապա, բնականաբար, այդ վերաբերականի գործածությունն անտեղի կլիներ: Եվ, իսկապես, խախտված է բաժանման միջոցով հասկացության սահմանմանը ներկայացվող պահանջներից մեկը՝ համաչափությունը. սահմանվող «տնտեսական զարգացման գործոն» հասկացության ծավալն ավելի մեծ է սահմանող վեց հասկացությունների ծավալների գումարից: Պարզ ասած՝ հնարավոր է թվարկել բաժանումից դուրս մնացած այլ գործոններ, ասենք՝ պետության տնտեսական քաղաքականությունը, մասնագիտական կադրերով ապահովվածությունը, զբաղված բնակչության ընդհանուր կրթական մակարդակը, միջազգային համագործակցությունը և այլն: Սա ոչ լրիվ ինդուկցիայի սխալի (inductio incomplete) տեսակ է, երբ թերի թվարկմամբ փորձ է արվում սպառել («ապա դրանք հետևյալներն են») հասկացության բովանդակությունը:

Այս սխալից կարելի էր խուսափել լեզվական նվազագույն միջամտությամբ, ընդամենը հավելելով նույն այդ «հիմնականում» բառը. «Ինչ վերաբերում է տնտեսական զարգացման գործոններին, ապա դրանք հիմնականում հետևյալն են»:

✓ «Մեր կարծիքով՝ շրջանառու միջոցների օգտագործման արդյունավետության առավել հատկանշական բնութագիր է *համարվում* դրանց շրջանառելիությունը, այսինքն՝ շրջանառու միջոցների տեսակի, այսպես կոչված, պտույտների քանակը» (ամսագրային հոդվածից):

Ստույգ դիրքորոշման մասին սկսելով՝ հեղինակը ինքն իրեն այնուհետև հերքում է: Չէ՞ որ «մեր կարծիքով» ձևակերպմամբ խոսողն իրեն առանձնացնում է այլոց կարծիքներից, բայց «համարվում» բայով՝ միանում ընդհանուր տեսակետին: Եթե «մեր կարծիքով» է, ուրեմն՝ հստակորեն պիտի ասվի, թե «....բնութագիր է

դրանց շրջանառելիությունը» (առանց «համարվում» վերաբերականի): Իսկ եթե ասվածը, իրոք, ընդհանուր, ընդունված, շատերի կարծիքին համընկնող միտք է, ուրեմն ավելորդ է նախադասության մուտքը: Կա՛մ մեր կարծիքը նորություն է, կա՛մ դա հայտնի բան է, նորություն չէ. այստեղ երրորդ ձևակերպում լինել չի կարող:

✓ «Հարկ է նշել այն փաստը, որ ներկայումս Հայաստանում գոյություն չունի արդյունաբերական քաղաքականություն (կամ ավելի ճիշտ՝ այն *իրականացվում է* առանց որևէ կորդինացման), արդյունքում՝ ներդրվող պետության միջոցները չեն տալիս պահանջվող հատույցը» (մենագրությունից):

Եթե արդյունաբերական քաղաքականության չգոյությունը «փաստ» է, ապա այդ գոյություն չունեցողը հնարավոր չէ իրականացնել ոչ մի կերպ: Հեղինակների ձևակերպմամբ՝ և՛ չկա, և՛ այնուամենայնիվ, կա (բայց սխալ է իրականացվում): Մինչդեռ երկու հակադիր դատողությունները չեն կարող միաժամանակ ճիշտ լինել (տրամաբանական մտածողության «անհակասության» օրենքի պահանջով): «Արդյունք» բառն էլ գործածում ենք դրական երևույթները բնորոշելիս, ուստի այստեղ հարկավոր էր «հետևանքից» խոսել:

Առաջարկվող շտկումը. «Հարկ է նշել, որ ներկայումս Հայաստանում կա՛մ գոյություն չունի արդյունաբերական քաղաքականություն, կա՛մ էլ, ավելի ճիշտ՝ այն իրականացվում է առանց որևէ կորդինացման, դրա հետևանքով պետության ներդրվող միջոցները չեն տալիս պահանջվող հատույցը»:

✓ «Ամենացավալին այն է, որ Սևանի իշխանը մտցված է Կարմիր գրքի մեջ և վերացման ենթակա է» (մենագրությունից):

Հեղինակների մտադրությանը հակառակ՝ «Կարմիր գրքի» փոխարեն ստիպված ենք կարդալ... «կարմիր քարտ»: Այնինչ, լեզվական թեթևակի միջամտությամբ հեղինակների միտքն ավելի համարժեք կարտահայտվեր. «Ամենացավալին այն է, որ Սևանի իշխանը, թեպետ մտցված է Կարմիր գրքի մեջ, բայց ենթակա է վերացման»:

✓ «ԱՄՆ-ի և Հայաստանի նման փոքր երկրների հանգամանքները, հետևաբար նաև անվտանգության խնդիրները էապես տարբերվում են....» (մենագրությունից):

Ակամա զավեշտից հեշտորեն կարելի էր խուսափել «երկիր» բառի եզակի գործածությամբ. «ԱՄՆ-ի և Հայաստանի նման փոքր երկրի հանգամանքները, հետևաբար նաև անվտանգության խնդիրները էապես տարբերվում են...»:

✓ «Քանի որ դառը ճակատագրի բերումով մշտապես մենք սահմանակից ենք լինելու ազերի թուրքերի հետ, ուստի պետք է ճիշտ *գնահատել* հատկապես սահմանամերձ գյուղերի պաշտպանական *անգնահատելի* նշանակությունը» (ամսագրային հոդվածից):

«Գնահատել» բառը գործածվել է երկու տարբեր իմաստով՝ առաջին անգամ «գինը որոշելու» բուն նշանակությամբ, երկրորդ անգամ՝ փոխաբերական՝ «չափազանց մեծ նշանակություն ունեցող» իմաստով: Ձևական տրամաբանության առումով խախտվել է նույնության օրենքը, իսկ դրա հետևանքով էլ հակասության օրենքը՝ պետք է ճիշտ գնահատել մի բան, որը... հնարավոր չէ գնահատել:

Ի դեպ, հին հույն սոփեստները հիմնականում հենց նույնության օրենքի խախտմամբ էին միամիտ զրուցակիցներին զգում ծուղակը: Այսպես՝ սոփեստը հարցնում էր. «Արդարացի՞ է, որ ամեն ոք իր կարծիքն ունենա»: Պատասխանը, բնականաբար, հաստատական է: «Լավ,– շարունակում է սոփեստը,– դատավորը ունի կարծիք, որը անարդարացի է: Հիմա, արդարացի՞ է, որ անարդարացի է»: Իմաստակությունը քողազերծելիս ցույց ենք տալիս կատարված նենգափոխությունը. առաջին «արդարացի»-ն նշանակում է բոլորի հավասար իրավունքը՝ ունենալու սեփական կարծիք (թեկուզ՝ սխալ), երկրորդ «արդարացի»-ն արդեն այլ իմաստ ունի՝ դատավորի մասնագիտական պարտականությունն է՝ համարժեք սահմանելու հանցանքի և պատժի հարաբերակցությունը:

Իսկ քննարկվող օրինակում կարելի է հեղինակի միտքն ավելի ստույգ մատուցել. «... հատկապես սահմանամերձ գյուղերի պաշտպանվածության բացառիկ նշանակությունը»:

Կարելի էր, թերևս, փոքր-ինչ սաստկացնել ասելիքը (չխախտելով գիտական ոճը)՝ «... հատկապես սահմանամերձ գյուղերի անառիկ պաշտպանվածության ռազմավարական նշանակությունը»:

✓ «Բանակ. գործունեություն, որի նպատակը ռազմական հայեցակարգի ստեղծումն ու խթանումն է, ինչպես նաև երիտասարդներին զինվորական ծառայության մեջ ներգրավումը» (մենագրությունից):

Եթե անգամ ընդունենք, որ, ըստ հեղինակի, այստեղ սահմանվում է բանակի՝ որպես «հասարակական ոչ առևտրային սուբյեկտի մարքեթինգային» գործունեությունը, ապա, միևնույն է, բանակի գործունեության նպատակը երկրի ամբողջականության անձեռնմխելիության պահպանումն է, իսկ զինվորական ծառայության մեջ երիտասարդներին ներգրավելը՝ դրա միջոցներից մեկը: Անհաջող է «ռազմական հայեցակարգի խթանում» ձևակերպումը:

✓ «Ուրբանիզացման գործընթացին ողջ աշխարհում հատուկ է ևս մի միտում՝ խոշոր քաղաքների, մեգապոլիսների աճ» (ամսագրային հոդվածից):

Իսկ ի՞նչ է նշանակում բուն «ուրբանիզացիա» հասկացությունը, եթե ոչ «քաղաքակենտրոնացում», այսինքն՝ խոշոր քաղաքների աճ, քաղաքների խոշորացում:

✓ «Կապիտալ ներդրումներն ինվեստիցիաներ են հիմնական կապիտալում» (մենագրությունից):

Օտար բառի անհարկի գործածությունը այստեղ ևս գոյացրել է կրկնաբանության սխալ. «ինվեստիցիա» նշանակում է ներդրում, և վստահ ենք, որ հեղինակը երբեք չէր գրի, թե «Կապիտալ ներդրումները ներդրումներ են հիմնական կապիտալում»:

✓ «Օձերը ձմռանը քուն են մտնում և... նրանց թույնի կոնցենտրացիան խտանում է» (պարբերականից):

Դարձյալ օտար բառի գործածությունն է վնասել մտքի մատուցմանը. քանի որ «կոնցենտրացիա» նշանակում է «խտություն», ապա հանձնարարելի է կա՛մ «թույնը խտանում է», կա՛մ «խտությունը մեծանում է»:

✓ «Ժամանակի գործոնի ազդեցությունն առաջարկի վրա դրսևորվում է նաև նրանով, որ *հաճախ* գները *ժամանակ առ ժամանակ* բարձրանում են և պայմաններ ստեղծում շուկայում առաջարկի ծավալն ավելացնելու համար» (մենագրությունից):

Ժամանակի պարագան անհարկի կրկնվել է. միգուցե խմբագրական անհաջող միջամտության հետևանք է, սակայն ընթերցողի վիճակը դրանից չի թեթևանում:

✓ «Միաժամանակ, կարելի է ժամանակ առ ժամանակ օգտվել մրցակիցների ծառայություններից և գնահատել նրանց ուժեղ և թույլ կողմերը» (մենագրությունից):

Հեղինակների մտքի ոչ այնքան հաջող մատուցումը տվյալ դեպքում չի առնչվում բառի ուղղակի կրկնությանը. այստեղ գոյացել է ոճական անհարթություն՝ խոսքն ակամա հանգավորվել է: Դրանից կարելի էր խուսափել, օրինակ, «Ժամանակ առ ժամանակ»-ի փոխարեն գործածելով «երբեմն» բառը:

✓ «Ապրանքների պարունակած վտանգները կարող են ունենալ ամենաբազմազան հետևանքներ: Դրանք կարող են առաջացնել օնկոլոգիական հիվանդություններ, խնդիրներ մանկածնության հետ, ալերգիկ հիվանդություններ, հրեշածնություն, թունավորումներ, մահ, խթանել քրոնիկ հիվանդություններ: Այս շարքը կարելի է շարունակել» (ամսագրային հոդվածից):

Հեղինակը չի շարունակել շարքը, և դա հնարավոր էլ չէ. մահվան հիշատակումով շարքն ավարտված է: Իսկ առհասարակ հարկավոր էր պահպանել թվարկման տրամաբանությունը՝ պակաս վտանգավորից դեպի առավել վտանգավորը, օրինակ՝ «...Դրանք կարող են առաջացնել թունավորումներ, ալերգիա, սաստկացնել քրոնիկ հիվանդությունները, առաջացնել օնկոլոգիական հիվանդություններ, խնդիրներ մանկածնության հետ, հրեշածնություն, մահ»:

✓ «Ստրկատիրական տնտեսության զարգացման անհրաժեշտ պայմանը մշտական պատերազմներն էին, որոնք ապահովում էին ստրուկների բանակի համալրումը, և որոնց թիվը գնալով կրճատվում էր» (մենագրությունից):

Հեղինակների մտադրությանը հակառակ՝ «որոնց» դերանունը վերաբերում է պատերազմներին, ոչ թե ստրուկներին: Հնարավոր է շտկել հետևյալ շարադասությամբ. «Ստրկատիրական տնտեսության զարգացման անհրաժեշտ պայմանը մշտական պատերազմներն էին, որոնցով լրացվում էր ստրուկների կրճատվող քանակը»:

✓ «Առարկայի *հասկացությունը* XIX դարում հանգեցվում էր ժողովուրդների տնտեսական գործունեության էվոլյուցիային՝ նախնադարից մինչև ժամանակակից վիճակը» (ուսումնական ձեռնարկից):

Հեղինակները նկատի ունեն «տնտեսական պատմություն» դասընթացի առարկայի ըմբռնման պատմական փոփոխությունը, ուստի այդ էլ պիտի ասվի՝ «առարկայի ըմբռնումը»:

✓ «Անորոշության *հասկացությունը* և դրա դերը տնտեսության մեջ ընդգծվում են շատ գիտնականների կողմից» (մենագրությունից):

Ընդգծվում է ոչ թե հասկացությունը, այլ ըմբռնումը. որպես հասկացություն՝ «անորոշությունը» ընդամենը բառ է, որով մենք նշանակում ենք որոշակի իրողության մեր ըմբռնումը: Փորձենք շտկել՝ «Անորոշության ըմբռնումը և տնտեսության մեջ դրա դերը շատ գիտնականներ են ընդգծում (ավելի հաջող է՝ կարևորում)»:

✓ «Քաղաքական շուկայի կարևոր *հասկացություններից* մեկը գնի որոշումն է, որպես քաղաքականության մեջ փոխանակման կարգավորիչ» (մենագրությունից):

Դարձյալ՝ հեղինակը նկատի ունի հատկապես երևույթի ըմբռնումը, ոչ թե «հասկացությունը», և չի էլ փորձել սահմանել «գնի որոշում» հասկացությունը:

✓ «Վոզնեսենսկու աշխատությունները էական դեր են խաղացել ԽՍՀՄ տնտեսագիտական մտքի զարգացման *գործում*» (ուսումնական ձեռնարկից):

Այս «գործ» բառը, երբ ներգոյական հոլովաձևով հաջորդում է որևէ բայի, որպես կանոն, խախտում է գիտական գրվածքի ոճական ներդաշնակությունը: Եթե պարզ ասեինք՝ «...զարգացման մեջ», մեր միտքը կտուժե՞ր: Փոխարենը կխուսափենք գրասենյակային ոճի գործածությունից: Մի՞թե կա ինչ-որ առանձին «զարգացման գործ», որի մեջ «էական դեր» պիտի խաղալ:

✓ «Մեծ է տնտեսական պատմության դերը ուսանողների տնտեսագիտական գիտելիքների ձևավորման, համակողմանի զարգացած տնտեսագետ կադրերի պատրաստման *գործում*» (ուսումնական ձեռնարկից):

Ոճական նույն անհարթությունն է: Կարող ենք առաջարկել խմբագրման տարբերակ. «Մեծ է տնտեսական պատմության դերը ուսանողների տնտեսագիտական գիտելիքները ձևավորելիս, համակողմանի զարգացած տնտեսագետ կադրեր պատրաստելիս»:

✓ «Նոր տնտեսակարգի կայացման գործընթացն առավել ամբողջական ներկայացնելու գործում առանձնահատուկ կարևորություն են ստանում համաշխարհային տնտեսության ներսում առավել տարածված, տնտեսագիտական հիմնական ուսմունքների գործնական կիրառության ընդունված և համեմատաբար նոր ձևերն ու մեթոդները» (ուսումնական ձեռնարկից):

Բացի քննարկվածից, այս նախադասության մեջ այլ վրիպումներ էլ կան: «Ամբողջականը» չի լինում «առավել» կամ ոչ առավել. օրինակ՝ շարադրանքը կա՛մ ամբողջական է, կա՛մ ոչ ամբողջական (թերի, թերատ, անավարտ և այլն): «Գործնական կիրառություն» արտահայտությունը կրկնաբանության սխալ է. «կիրառել»՝ նշանակում է գործածել, օգտագործել, գործադրել: «Տարածված» և «ընդունված» ածականները ևս սովորաբար խոսքաշարում նույն իմաստն են հաղորդում: «Առավել» բառը կարող էր չկրկնվել (խախտելով Նիկոլա Բուալոյի հայտնի կանոնը 200 բառի ընդմիջում տալու մասին). օրինակ՝ «առավել տարածված»-ի փոխարեն՝ «ամենատարածված»: «Առանձնահատուկ կարևորություն են ստանում» ձևակերպումն էլ կարելի է թեթևացնել:

Շտկենք ասվածի լույսով՝ «Նոր տնտեսակարգի կայացման ընթացքն ամբողջական բնութագրելու առումով առանձնապես կարևոր են համաշխարհային տնտեսության ներսում առավել տարածված՝ տնտեսագիտական հիմնական ուսմունքների գործարման համեմատաբար նոր ձևերն ու մեթոդները»:

✓ «Արժևորումը հանգեցնում է ազգային արժույթով արտահայտված արտահանումից ստացվող մուտքերի կրճատմանը, ինչի արդյունքում ՀՀ տնտեսության արտահանելի հատվածը արժևորման ժամանակահատվածում որոշակիորեն կորցրել է մրցունակությունը տնտեսության ոչ արտահանելի հատվածի համեմատ» (ատենախոսության սեղմագրից):

Ըստ կայունացած բառագործածության՝ «արդյունք» բառը զուգորդվում է արարման, ստեղծման, ձեռքբերման, նվաճման, ոչ թե

կորստի, անցանկալի մեկ այլ երևույթի հետ: Իհարկե, զուտ պատճառահետևանքային կապի առումով թե՛ «արդյունքը», թե՛ «հետևանքը» տրամաբանական նույն կարգավիճակն ունեն՝ որպես իրողություն (իրադարձություն, վիճակ) հաջորդում են մեկ այլ իրողության: Այդուհանդերձ, գործաբանական-մշակութային, նաև դրանցից ածանցյալ ոճական նկատառումները մեզանից պահանջում են տարաբաժանել այդ բառ-հասկացությունների գործածության տիրույթները: Այնպես որ, վերոբերյալ օրինակում և համանման իրադրությունների արձանագրումներում գործածենք «հետևանք»-ը՝ «արդյունքը» պահելով իսկապես արգասաբեր իրադրությունների համար:

✓ «Դրա համար անհրաժեշտ է գիտակցել ճգնաժամի հետ պայքարի անարդյունավետությունը ավանդական մտածողության սահմաններում և անհրաժեշտ է նոր տնտեսական կուրսի վերաբերյալ ձևավորել հասարակական պահանջարկ» (ամսագրային հոդվածից):

✓ «Չպետք է մոռանալ, որ մենք, փաստորեն, Ադրբեջանի հետ դեռևս պատերազմի մեջ ենք...» (ամսագրային հոդվածից):

Թեպետ միտքը հասկանալի է, սակայն բառագործածության սխալ կա: Հեղինակների մտադրության համարժեք մատուցումը պահանջում էր «հետ» կապի փոխարեն «դեմ»-ի գործածություն. «հետը» համատեղություն է նշում, «դեմն» է ստույգ արտահայտում հակադրվելը, հակառակվելը: Պայքարում, պատերազմում ենք ինչ-որ բանի դեմ, ոչ թե հետ: Նման խոսքաշարում այս երկու կապերի թյուր գործածությունը ռուսերենի չհաղթահարված ազդեցության հետևանքն է:

Գիտական աշխատությունների լեզվատրամաբանական մատուցման բոլոր հարցերը, բնականաբար, հնարավոր չէ ներառել հետազոտության շրջանակներում. մենք անդրադարձանք առավելապես գիտական սահմանումներին, դրանցում հանդիպող խախտումներին և հարակից որոշ հարցերի: Խնդրի բովանդակ քննարկումը պահանջում է հետագա հետազոտական աշխատանք:

4. ԲԱՌԱԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԽԱԹԱՐՈՒՄՆԵՐ

«Տնտեսագիտական» – «տնտեսական»

✓ «Նորամուծությունների ոլորտում պետական ազդեցության եղանակները կարող են լինել ուղղակի և անուղղակի: Դրանց հարաբերակցությունը պայմանավորված է գոյություն ունեցող տնտեսական իրավիճակով և գործող *տնտեսական* հիմնադրույթներով: Տնտեսագետների մի մասն այն կարծիքին է, որ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է շեշտը դնել շուկայի վրա, իսկ մյուսները առաջնային են համարում պետական ակտիվ միջամտությունը» (ուսումնական ձեռնարկից):

«Հիմնադրույթները» վերաբերում են գիտությանը, ուրեմն պետք էր գրել «...**տնտեսագիտական** հիմնադրույթներով»: Ասվածը հաստատվում է երրորդ նախադասությամբ, որում հենց շարադրված են ներհակ հիմնադրույթները:

Իսկ «տնտեսական իրավիճակ» արտահայտության կողքին «գոյություն ունեցող» բնութագրումը միանգամայն ավելորդ է: Նկատենք, որ «տնտեսական իրավիճակ» բառակապակցությունը միշտ չէ, որ արդարացված է. կարելի էր պարզապես «տնտեսա-կան վիճակ» արտահայտությունը գործածել:

Ասվածը հիմնավորելու համար նույն աղբյուրից բերենք կրկնաբանության արտառոց օրինակ. «Այս փուլում կառավարությունը հանգամանորեն քննարկում է ծրագրի նախագիծը, կատարում իրական տնտեսական իրավիճակից բխող անհրաժեշտ փոփոխություններ»(ուսումնական ձեռնարկից):

Եթե այդքան անհրաժեշտ էր արտահայտել կառավարության իրատեսական վարվելակերպը, կարելի էր շարադասությունը փոխել. «Այս փուլում կառավարությունը հանգամանորեն քննարկում է ծրագրի նախագիծը, կատարում տնտեսության իրական վիճակից բխող անհրաժեշտ փոփոխություններ»:

✓ «*Տնտեսական* վերլուծության ժամանակ ուսումնասիրվում են ոչ միայն գործոնային ուղղակի, այլև անուղղակի փոխկապակցություններ... *Տնտեսական* վերլուծությունում խմբավորումների եղանակը տարբեր նպատակներով է օգտագործվում... *Տնտեսական*

վերլուծություն կատարելիս լայնորեն կիրառվում են նաև համեմատական հարաբերական մեծությունները...» (ուսումնական ձեռնարկից):

Այստեղ արդեն պահանջվում էր «տնտեսագիտականի» գործածությունը:

«Տնտեսական» է լինում երկույթը, ուստի և ասում ենք՝ «տնտեսական գործունեություն», «տնտեսական պարբերաշրջան», «տնտեսական ճգնաժամ» և այլն, իսկ տեսությունը, վերլուծությունը՝ «տնտեսագիտական», այսինքն՝ տնտեսական երկույթի իմացական արտացոլումը: Ահա թե ինչու կարող է լինել և՛ «տնտեսական խնդիր», և՛ «տնտեսագիտական խնդիր». եզրի գործածությունը պայմանավորված է խոսքաշարով, հեղինակի մտադրությամբ՝ նա նկատի ունի տնտեսակա՞ն ինչ-որ իրողություն, թե՞ դրա գիտական պարզաբանումը:

✓ «Այդ ժամանակաշրջանի հայ հեղինակներից ոչ ոք հատուկ տնտեսագիտական ուսումնասիրություն չի թողել, և չենք էլ կարող նրանցից *տնտեսագիտական* երկույթների համակարգված վերլուծություն ակնկալել: *Տնտեսագիտական* երկույթների մեկնաբանություններ կատարվել են տարբեր առիթներով՝ պատմաբանների, քաղաքական ու պետական գործիչների աշխատություններում» (ուսումնական ձեռնարկից):

Նախորդ բացատրության լույսով ակնհայտ է, որ այս անգամ էլ հակառակն է արվել՝ «տնտեսական» բնութագրիչի փոխարեն «տնտեսագիտական» է գործածվել:

«Ժխտում» – «հերքում» – «մերժում»

✓ «Քեյնսն իր տեսությամբ *ժխտեց* մինչ այդ գոյություն ունեցող այն կարծիքը, որ շուկայական տնտեսությունն ունի ինքնակարգավորման հատկություն և ակտիվորեն հանդես եկավ տնտեսության պետական կարգավորման օգտին» (ուսումնական ձեռնարկից):

«Ժխտում» և «հերքում» բայերի շփոթը բավական տարածված է ոչ միայն գիտական գրականության մեջ: Մինչդեռ դրանց իմաստային տիրույթը միանգամայն հստակ է. «Ժխտում» ենք եղածը, իրողությունը, երկույթը, փաստը, «հերքում»՝ տեսակետը, կարծիքը, բացատրությունը, «մերժում»՝ առաջարկը:

Չկա, չի եղել, չի համապատասխանում իրականությանը, այդպիսի բան չկա և այլն. ահա թե ինչ ենք անում, երբ «ժխտում» ենք որևէ բան:

Քեյնսը իրականում **հերքել** է մինչ այդ եղած կարծիքը (տեսակետը, գիտական մեկնաբանությունը, հայեցակարգը, տնտեսագետների դիրքորոշումը): Այլապես, եթե պահպանենք հեղինակների գործածած «ժխտում» բայը, ականա անմտություն կստացվի. այն է՝ իբր Քեյնսն ասում է, թե գոյություն չունի այն, ինչին ինքն իր տեսությամբ հակադրվում է: Այս բացատրության լույսով նույնաբնույթ սխալ է, թե «Գ. Տաթևացին *մերժում* է այս տեսակետը», «Կ. Մենզերը *ժխտում* է Արիստոտելի տեսակետը», «պարբերականության գաղափարը *ժխտվում* էր». բոլոր տեղերում էլ «հերքել» բայն է պահանջվում:

«Հաշվին» – «շնորհիվ»

Եթե հատուկ ուշադրություն դարձնենք «հաշվին» և «շնորհիվ» կապերի գործածությանը, ապա ժամանակակից հայերենում դրանք դարձունակ են միայն դրական իրողության արձանագրման տիրույթում: Ստորև օրինակներում, սակայն, որոշակի շփոթ ենք արձանագրում:

✓ Ջուտ շահույթի *հաշվին* լրացուցիչ ձևավորված սեփական կապիտալի *հաշվին* բարձրանում է կազմակերպության ֆինանսական կայունությունը (մենագրությունից):

Միտքը, իհարկե, հնարավոր է հասկանալ, սակայն «հաշվին» բառը մանավանդ՝ անհարկի կրկնված) երկիմաստություն է առաջացրել: Միգուցե ընդունելի՞ է հետևյալ տարբերակը. «Ջուտ շահույթից լրացուցիչ ձևավորված սեփական կապիտալի շնորհիվ ամրանում է կազմակերպության ֆինանսական կայունությունը»:

✓ Դա հատկապես վերաբերվում է խոշորամասշտաբ նախագծերին, որոնք հաճախ հնարավոր չէ իրականացնել միայն սեփական միջոցների *հաշվին* (մենագրությունից):

✓ «Այստեղ հարկ է նշել, որ գիտության և կրթության ոլորտի ֆինանսավորումը իրականացվում է ոչ միայն բյուջետային միջոցների *հաշվին*» (մենագրությունից):

Այս երկու օրինակում պարզապես հարկավոր էր «հաշվին» բառից ազատվել՝ «սեփական միջոցներով», «բյուջետային միջոցներից»:

Իսկ վերջին մենագրությունից հաջորդ օրինակում մենք կգերադասեինք (ինչպես ոճական, այնպես էլ տրամաբանական առումով) «հաշվին»-ը փոխարինել «շնորհիվ»-ով. «Հենց այս փուլում է արտադրողը առավել եկամուտներ ստանում արտադրանքի բարձր մրցունակության *հաշվին*, իսկ վերջինս ամենից առաջ կախված է մրցակիցների բացակայությունից, ինչպես նաև գովազդային և այլ առևտրային կազմակերպական միջոցառումների իրականացումից»:

Հեղինակի մտադրության ստույգ ընկալման առումով, կարծում ենք, ավելի խնդրահարույց է «ի հաշիվ» մակբայի գործածությունը ստորև օրինակներում:

✓ «Տնտեսության բարձր տեխնոլոգիական բնագավառներում ազգային ընկերությունների առաջատար դիրքերը հնարավորություն են տալիս ակտիվորեն նպաստել երկրի արտաքին առևտրային հաշվեկշռի բարելավմանը՝ *ի հաշիվ* այլ երկրներ գիտատար արտադրանքի արտահանման» (մենագրությունից):

✓ «Ուսումնասիրությունները վկայում են, որ հարկերը բոլոր ժամանակներում անփոխարինելի միջոց են եղել պետական ապարատի պահպանման համար: *Ի հաշիվ* հարկերի են ձևավորվում ֆինանսական այն անհրաժեշտ միջոցները, առանց որի ոչ մի պետություն չի կարող իրականացնել իր գործառույթները» (ուսումնական ձեռնարկից):

Փորձենք կարգալ նույն օրինակները՝ տեղադրելով «շնորհիվ» կապը և կհամոզվենք, որ երկիմաստությունը վերանում է: Իրոք, ավելի քան հասկանալի է դառնում, որ երկրի արտաքին առևտրային դրական հաշվեկշռը՝ արտահանման և ներմուծման հարաբերակցությունը, հոգուտ իրեն ապահովելը (ընդ որում՝ հնարավորինս ավելի մեծ ծավալով պատրաստի արտադրանքի արտահանմամբ և հումքի ներմուծմամբ) բարելավվում է **շնորհիվ** գիտատար արտադրանքի ավելացման: Նույնկերպ, պետությանն անհրաժեշտ ֆինանսական միջոցները գոյանում են հարկերի *շնորհիվ*, ոչ թե ի վնաս դրանց (ինչը բխում է «ի հաշիվ» ձևակերպու-

մից): Թերևս, գիտականորեն ավելի ստույգ կլիներ հետևյալ տարբերակը. «Հարկահավաքման շնորհիվ են գոյանում ֆինանսական...»:

«Որակ» – «հատկություն»

✓ «Ազահությունը հոգեբանական որակ է, որը ձևավորվում է մանկական տարիքում» (հոդվածից): «Սակայն սա այն դեպքերից է, երբ մարդուն հատուկ որակների մասին կարելի է մոռանալ» (հոդվածից):

Ռուսերենում «качество» (որակ) բառը վերաբերում է ինչպես անձանց, այնպես էլ առարկաներին: Հայերենում վիճելի է անձանիշ գոյականների հետ «որակի» գործածությունը, մանավանդ, եթե այդ բառի չարաշահման պատճառով նաև մոռանում ենք մեր բառապաշարի հարստությունը՝ «հատկություն», «ունակություն», «ընդունակություն», «բնավորության գիծ» (բնութագիծ), «արժանիք», «բարեմասնություն» և այլն:

Փորձենք առաջարկել ճշման տարբերակ:

«Ազահությունը հոգեկան **հատկություն** է...»: Հատկությունը (նաև որակը) մարդու հոգեկանին, այլ ոչ դրա մասին գիտությանը՝ հոգեբանությանը վերաբերող իրողություն է: Նույնկերպ՝ «Սակայն սա այն դեպքերից է, երբ մարդուն բնորոշ **հատկությունների** մասին կարելի է մոռանալ»:

✓ «Արդյունքը շատ բանով կախված է անհատական որակներից, առաջին հերթին՝ ղեկավարի. նրա բնավորությունից, կյանքի և մասնագիտական փորձից, կրթական մակարդակից, մտածելակերպից, հոգեբանական առանձնահատկություններից: Ակնհայտ է, որ այդ որակները էապես տարբերում են իրարից նույնիսկ երկու ղեկավարների» (ուսումնական ձեռնարկից):

Այս դեպքում, հավանաբար, ավելի ճիշտ է «բնութագծերի» գործածությունը, քանի որ թվարկվում են մի շարք երևույթներ. «Արդյունքը շատ բանով կախված է անհատական բնութագծերից, առաջին հերթին՝ ղեկավարի. նրա բնավորությունից, կյանքի և մասնագիտական փորձից, կրթական մակարդակից, մտածելակերպից, հոգեկան առանձնահատկություններից: Ակնհայտ է, որ այդ բնութագծերն էապես տարբերում են իրարից նույնիսկ երկու ղեկավարների»:

«Տեսակ» – «տեսականի»

✓ «Եթե տվյալ ապրանքը խանութում ներկայացված է մի քանի տասնյակ տեսականիով, ապա...» (ամսագրային հոդվածից):

«Տեսականի» բառը հավաքականություն արտահայտող գոյական է, ինչպես, ասենք, «ընտրանի», «ավազանի», «առածանի», «նամականի»: «Տեսականի» նշանակում է «տեսակների ամբողջություն», ինչպես որ «առածանի»՝ առածների և ասացվածքների ժողովում: Մեկ ապրանքը երկու տեսականի չի կարող ունենալ, էլ ուր մնաց «մի քանի տասնյակ»:

Այս պարզեցման լույսով երեք տարբերակ՝

«Եթե տվյալ ապրանքը խանութում ներկայացված է մի քանի տասնյակ տեսակով, ապա...»:

«Եթե տվյալ ապրանքը խանութում ներկայացված է շատ հարուստ տեսականիով, ապա...»:

«Եթե խանութում տվյալ ապրանքի տեսականին շատ լայն է, ապա...»:

«Արտերկիր»՝ միայն եզակի

✓ «Ուսումնական ձեռնարկը շարադրելիս հաշվի են առնվել արտասահմանյան երկրներում դասավանդվող հարկային իրավունքի գործող պետական ծրագրերը, հարկային իրավունքի վերաբերյալ օրենսդրական ակտերի ժողովածուները, ինչպես նաև *արտերկրներում* հրատարակված հարկային իրավունքի դասագրքերը»: «Ինստիտուտը կրթական և գիտական կապեր է ունեցել ոչ միայն նախկին Խորհրդային Միության երկրների, այլ նաև *արտերկրների* մի շարք կրթօջախների... Արտերկրներում վերապատրաստման դասընթացներ են անցել 120 դասախոս և ասպիրանտ» (հոդվածից):

Ակնհայտ է, որ հեղինակներն ուզել են ասել «արտասահմանյան երկրներ», այսինքն՝ «արտերկիր» բաղադրությունը ընկալվել է որպես տվյալ բառակապակցության հոմանիշ: Բայց ճիշտ է արդյոք այդպիսի գործածությունը:

Ըստ բացատրական բառարանների՝ «արտերկիր» նշանակում է «արտասահման»: Ունենք նաև «արտերկրյա» և «արտերկրային» ածականները, որ նշանակում են տվյալ երկրի սահմաններից դուրս գտնվող (էքստերիտորիալ): «Արտերկիր» նշանակում է, այս-

5. ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ

պիսով, տվյալ երկրից դուրս գտնվողը, այն ամենը, ինչ արտաքին է: Հայաստանի համար դրսի ամբողջ տարածքը արտ-երկիր է: Այսինքն՝ արտերկիր ասելով հասկանում ենք դրսի բոլոր երկրները միասին վերցրած, հետևաբար՝ այդ բառը չի կարող հոգնակի թվով գործածվել:

Բացի դրանից, քանի որ երկիրը նաև մեր մոլորակի անվանումն է, ապա «արտերկիր» ևս մի նշանակություն ունի, այն է՝ երկրագնդից դուրս: Հայ-ռուսերեն վերջին բառարանը այդպես էլ տալիս է «արտերկրային կյանք» արտահայտության թարգմանությունը՝ «внеземная жизнь»: Ուրեմն, վերոբերյալ բոլոր օրինակներում պահանջվում է այդ բառի գործածությունը եզակի թվով, ինչպես որ «Սկյուռք» բառի դեպքում է:

✓ «Հասկանալի է, որ նոր հասկացության հաճախակի կիրառումը անհրաժեշտություն է *առաջացնում* բացահայտելու դրա *առաջացման* պատճառները և տալու դրա գիտական սահմանումները» (մենագրությունից):

Հայերենի բառապաշարը մի՞թե այդքան աղքատիկ է, որ հնարավոր չի եղել խոսքաշարին սազական որևէ հոմանիշ գործածելը, ասենք՝ «առաջ գալ», «ի հայտ գալ», «ծագել», «հայտնվել», «գոյանալ» և այլն: Փորձենք դա (և որոշ այլ շտկումներ) անել հեղինակի և խմբագրի փոխարեն. «Հասկանալի է, որ նոր հասկացության հաճախադեպ գործածությունը անհրաժեշտություն է առաջացնում պարզաբանելու դրա ծագման պատճառները և տալու գիտական սահմանումը»:

✓ «Ընդհակառակը, սրանց կողքին և սրանցից հետո էլ եղել են *բազմաթիվ* գիտնականներ, ովքեր հետազոտել են *բազմաթիվ* հիմնախնդիրներ»:

Նորից («դարձյալ», «կրկին», «վերստին»...) բառագործածության նույն աղքատությունը, ոճական տարտամ պատկերը: Արդյոք չէի՞ն օգնի «շատ», «բազում», «մեծաքանակ», «ոչ քիչ թվով» և այլ ձևեր:

Առհասարակ, բառի կամ բառակապակցության միտումնավոր կրկնությունը խոսքի պատկերավորության և հուզական արտահայտչականության գործուն միջոց է. «հարակրկնությունը» (լատիներեն՝ «անաֆորա», «էպիֆորա») շատ է տարածված գեղարվեստական և քաղաքական խոսքում: Տվյալ դեպքում նման արդարացում (այսինքն՝ հեղինակի նպատակադրում) չկա, և գիտական խոսքին էլ պատշաճ չէ դարձույթների չարաշահումը:

Եթե նրբագագ ընթերցողին կոպիտ է թվում «բառապաշարի աղքատություն» ախտորոշումը (կարելի էր մեղմասույթ գործածել, բայց հայերենի անաղարտության հարցում չլինենք կեղծ քաղաքավարի), թող ծանոթանա հաջորդ օրինակին. ուսումնական ձեռնարկի մեկ էջում յոթ անգամ գործածվել է «ներկայացվել» բայը (յոթն էլ՝ անտեղի):

✓ «Ձեռնարկի յուրաքանչյուր գլխի սկզբում ամփոփ *ներկայացվում* են քննարկվող հարցադրումներն ու դրանց լուծումների բովանդակությունը... Յուրաքանչյուր գլխում *ներկայացված* տեսական մասի ամրապնդման նպատակով *ներկայացվում* են նաև իրավիճակային խնդիրներ, որոնց լուծումները տնտեսական վերլուծության միջոցով նպաստում են կառավարչական և ֆինանսական որոշումների կայացմանը: Ուսումնական ձեռնարկում տեղ գտած տնտեսական գործունեության վերլուծության խնդիրներն ու իրավիճակները *ներկայացված* են ըստ առանձին գլուխների: Ուստի, ուսանողները տվյալ գլխի տեսական մասը յուրացնելուց հետո, գիտելիքների ամրապնդման նպատակով պետք է լուծեն առաջարկվող խնդիրները, որոնց պատասխանները, ի դեպ, *ներկայացված* են առանձին գլխով... Ձեռնարկում *ներկայացված* է յուրաքանչյուր խնդրի ոչ միայն պատասխանը, այլև լուծման ողջ ընթացքը... Ուսումնական ձեռնարկում *ներկայացված* են ոչ միայն տնտեսական գործունեության վերլուծության վարժություններ, այլև իրավիճակային հիմնախնդիրներ»:

Այս դեպքում էլ լիովին տեղին կլինեն «առանձնացվում», «շարադրվում», «մեկնաբանվում», «բնութագրվում», «տրվում» և մի քանի այլ բայերի գործածությունը:

Ինչո՞ւ «կողմից» և ո՞ւմ «կողմից»

Այս «կողմից» բառաձևը գիտական որոշ տեքստերում մի իսկական կոտորած է սարքել, մորթել հայեցի լեզվամտածողությունը: Համոզվենք ուսումնական ձեռնարկից մի քանի օրինակով.

✓ «Այսպիսով, նոր պատմական դպրոցի *կողմից առաջ քաշված* տեսությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ...»:

Դարձնենք հայերեն. «Այսպիսով, նոր պատմական դպրոցի **առաջ քաշած** տեսությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ...»:

✓ «Աքվինացու աշխատությունը կաթոլիկության համար հանրագիտարանային նշանակություն ունի: Առ այսօր էլ նրա ուսմունքը լայնորեն օգտագործվում է Վատիկանի *կողմից...*»:

Շտկենք. «Առ այսօր էլ Վատիկանը լայնորեն օգտագործում է նրա ուսմունքը»:

✓ «Մասնագետների կարծիքով՝ Քեյնսի *կողմից առաջարկված* վերլուծության համակարգը «հեղափոխություն» էր տնտեսագիտության տեսության մեջ»:

Դարձյալ՝ հայերենին խորթ ձևը դյուրին արտաքսվում է. «Մասնագետների կարծիքով՝ Քեյնսի **առաջարկած** վերլուծության համակարգը «հեղափոխություն» էր տնտեսագիտության տեսության մեջ»:

«Հեղափոխություն» բառը պետք է գրվեր առանց չակերտի: Գիտության կամ տեսության մեջ հեղափոխությունը վաղուց չի ընկալվում փոխաբերական իմաստով, ուստի չակերտի կարիք չկա: Մինչդեռ չակերտով հեղինակը իր իսկ պնդումն ակամա կասկածի տակ է առել, այն է՝ Քեյնսի արածը իրականում հեղափոխությո՞ւն է արդյոք:

Երկու օրինակ էլ մեթոդական մի ձեռնարկից.

✓ «Այս գրքույկում ևս, անշուշտ, կան ուսանելի նյութեր, սակայն, ցավոք, պետք է նշեմ, որ գրքույկի հեղինակները ոչ միշտ է, որ ղեկավարվել են իրենց իսկ *կողմից տրված* խորհուրդներով»:

Փորձենք ուղղել. «...հեղինակները ոչ միշտ է, որ ղեկավարվել են իրենց իսկ խորհուրդներով»:

Մենք այստեղ նաև զեղչեցինք «տված» բառը, քանի որ դրա իմաստն արդեն արտահայտված է «իրենց» դերանունով և դեռ մի բան էլ սաստկացել է «իսկ» մասնիկի գործածությամբ:

✓ «Բոլորն էլ կարող են դիմել դասախոսների, գիտաշխատողների, որ քննարկեն արդեն *իրենց կողմից ընտրված* թեման, բայց ոչ թե խնդրեն նրանց թեմա առաջարկել»:

Վերստին՝ առաջարկենք տարբերակ. «Բոլորն էլ կարող են դիմել դասախոսների, գիտաշխատողների, որ քննարկեն **իրենց ընտրած** թեման...»: Այս դեպքում էլ բաց ենք թողնում «արդեն» բառը, քանի որ «ընտրած» բառաձևը բնութագրում է կատարված-ավարտված գործողություն:

7. ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄ

Գիտական խոսույթի ոճական առանձնահատկություններից մեկն էլ համառոտագրության, հապավումների, կրճատ նշանակումների և բանաձևերի լայն գործածությունն է: Գիտական աշխատության լեզվական ձևակերպման մեթոդաբանական խնդիրներ այստեղ էլ կան:

✓ «Սակավ չի պատահում, երբ ուսանողը, որևէ մասնագիտության գծով ԲՈՒՀ ավարտելուց հետո, ցանկանում է իր գիտելիքներն ասպիրանտուրայում խորացնել այլ բնագավառներում... Ի դեպ՝ սեմինարին մասնակցում էին տարբեր ԲՈՒՀ-երից պրոֆեսորներ...» (մենագրությունից):

Ըստ կանոնակարգման (հաստատված ՀՀ կրթության և նախարարի 2003 թ. հունվարի 14-ի հրամանով)՝ հասարակ գոյականի արժեք ստացած «բուհ» բառը գրվում է փոքրատառով: Սա արդարացված բացառություններից մեկն է (ինչպես նաև «զագար», «նէպը», «հէկը»), քանի որ տվյալ բառը հենց որպես հասարակ բառ էլ մտնում է բարդությունների մեջ՝ բուհական, միջբուհական և այլն: Եթե վերադառնանք ստույգ ձևին (իսկ օրինակը բերված է 2010 թ. առաջին անգամ հրատարակված գրքից) և, ընդհանուր կանոնին հետևելով, բաղադրյալ անունների տառային հապավումը սկսենք ամբողջությամբ գրել մեծատառով, ապա անգամ աչքի համար տզեղ պատկեր կլինի՝ միջԲՈՒՀական և այլն:

✓ «Մթա VI–III դարերում արագացավ արհեստների և առևտրի զարգացումը, սկսվեց երկաթի և բրոնզի օգտագործումը... Պլեբեյները մթա VI դարից պայքար են սկսում իրավահավասարության համար, որն ավարտվում է մթա III դարի վերջում... Աթենքը մթա V դարում դառնում է անտիկ աշխարհի արհեստագործության կենտրոն... Մթ II–III դարերում սկսված ստրկատիրության ճգնաժամը խոչընդոտում է արտադրողական ուժերի զարգացումը» (ուսումնական ձեռնարկից):

Այս ուսումնական ձեռնարկում այնքան են կրկնվում «մթա» և «մթ» ձևերը, որ սրբագրական վրիպակի մասին խոսք լինել չի կարող: Սրանք արդեն ոչ թե հապավում են, այլ համառոտագրություն,

և տառերը պետք է անջատվեն միջակետով: Երբ գրում ենք մ.թ.ա. (համառոտագրության այս ձևը հաստատվել է Տերմինաբանական կոմիտեի 1961 թ. որոշմամբ), ապա կարդում ենք «մեր թվականությունից (թվարկությունից) առաջ» (ճիշտը ամբողջական ձևով արտասանելն է, բայց խոսակցականում թույլատրելի է նաև «մըթըա»): Իսկ «մթա» և «մթ» գրելիս դրանք դառնում են ինքնուրույն բառեր, առաջացնում շփոթություն: Նկատենք նաև, որ քարացած ոչինչ չկա. եթե հեղինակները նման բառագործածության ինչ-ինչ հիմնավորումներ ունեն, լավ կլինի դիմեն ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ կամ Տերմինաբանական խորհուրդ՝ իրենց առաջարկը կանոնակարգելու նպատակով: Իսկ մինչ այդ, պետք է ենթարկվել համառոտագրությունների գրառման ընդունված կարգին:

Եզրակացություն

Դրամաշնորհային շրագրին հատկացված սահմանափակ ժամկետում, բնականաբար, հնարավոր չէ սպառել գիտական գրագրության լեզվատրամաբանական ձևակերպման բոլոր հարցերը: «Լեզու – խոսք» փոխադարձ անցումների խորքային դիտարկման, գիտական աշխատության կառուցվածքի և մատուցման, բառագործածության, ոճական առանձնահատկությունների, նաև առավել հաճախադեպ տարատեսակ խաթարումների շտկման հարցերը կարիք ունեն շարունակական վերլուծության: Իսկ տվյալ ծրագրի կատարման ընթացքում՝

❖ Քննարկվել են մեթոդաբանական բնույթի հարցեր, ամենից առաջ՝ հստակեցվել են առհասարակ գիտության լեզվին ներկայացվող պահանջները, քննարկվել են դրանց մասին տարբեր հեղինակների կարծիքները:

❖ Պարզաբանվել են գիտական աշխատության կառուցվածքին, ներտեքստային կապերին, վերնագրերին, հիմնաբառերին, բովանդակությանը, պարբերությունների փոխկապակցվածության և միասնականության սկզբունքներին, մեջբերումների, հղումների և ծանոթագրությունների կարգին, առաջաբանի և վերջաբանի շարադրանքին, համառոտագրություններին և հապավումներին վերաբերող մի շարք հարցեր:

❖ Վերլուծվել են տնտեսագիտական մի շարք հրապարակումներ (մենագրություններ, գիտական հոդվածներ, ատենախոսություններ)՝ նյութի մատուցման, բառագործածության, պատճառահետևանքային կապերի համարժեք արտացոլման, նորույթի ձևակերպման համոզկերության դիրքերից:

❖ Քննության են առնվել գիտական աշխատության լեզվատրամաբանական մատուցման խնդիրները, մասնավորապես՝ հիմնախնդրի տարրալուծումը բաղադրիչների, խնդրակների ձևակերպումը, ելակետային հասկացությունների սահմանումների տեսակ-

ները, փաստարկման և հակափաստարկման առանձնահատկությունները:

❖ Դիտարկվել են բառագործածության առավել հաճախադեպ սխալները, անհարկի օտարաբանությունները, ձևաբանության զանազան խախտումները, ոճական անհարթությունները, տրամաբանական խոսքի օրենքների խախտման որոշ դեպքեր:

❖ Գիտական խոսքի ձևակերպմանը և շարադրանքին, աշխատության կառուցվածքին, հեղինակների բառագործածությանը և ոճին, հարցադրման և եզրակացության հատվածներին, գիտական եզրերի սահմանումներին և բոլոր մյուս հարցերին վերաբերող տարատեսակ սխալների համար առաջարկվել են շտկման տարբերակներ, որոնց միակ նպատակը, հեղինակների միտքն անխաթար պահելով, ընթերցողի համար առավելագույնս պարզ ու հասկանալի դարձնելն է:

❖ Հրատարկվել են՝

- «Գիտական հրապարակումների լեզվական ձևակերպման մի քանի հարց» // ՀՊՏՀ «Բանբեր», 2013, թ. 1:
- «Հայերենը՝ անաղարտ», երրորդ, բարեփոխված և լրացված հրատ., եր.: «ՎՄՎ-ՊՐԻՆՏ», 2013:
- «Գիտական աշխատության լեզվատրամաբանական մատուցումը» // ՀՊՏՀ «Բանբեր», 2013, թ. 2:

❖ Հետազոտության նյութերը կարող են օգտագործվել

- ՀՊՏՀ ասպիրանտների համար կարդացվող «Գիտական գրագրություն և աշխատանքների ձևակերպում» առարկայի շրջանակներում:
- ՀՊՏՀ մագիստրոսական ուսուցման համար կարդացվող «Կառավարման կուլտուրա և գործարար հաղորդակցման կառավարում» առարկայի շրջանակներում:
- ՀՊՏՀ բակալավրիական ուսուցման համար կարդացվող «Հոնոորական արվեստ» առարկայի շրջանակներում:

Գրականություն

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:
2. Աղայան Ղ., Հայոց լեզու // Ղ. Աղայան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 3, 1963:
3. Անհաղթ Դ., Փիլիսոփայության սահմանումները // Երկեր, Եր., 1980:
4. Ավագյան Մ., Խոհեր մայրենի լեզվի մասին, Եր., 1988:
5. Ավետիսյան Յու., Պաշտոնական ոճ, Եր., 2011:
6. Արշակյան Ա., Միկրոէկոնոմիկա, Եր., «Տնտեսագետ», 2006, էջ 75:
7. Բաղիկյան Խ., Ճիշտ խոսենք հայերեն, Եր., 2012:
8. Բառարան սուրբ գրոց, Եր., 1992:
9. Բեդիրյան Պ., Հայ լեզուն և մեր խոսքը, Եր., 1999:
10. Բրուտյան Գ., Գիտական աշխատանքի տեխնոլոգիան, Եր., 2010:
11. Բրուտյան Գ., Տրամաբանության դասընթաց, Եր., ԵՊՀ հրատ., 1987:
12. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Եր., 2007:
13. Գալստյան Հ., Ճիշտը և սխալը, Եր., 2007:
14. Գևորգյան Ե., Գևորգյան Ս., Հեռուստառադիոէթեր. լեզվական մեղանչումներից մինչև անաղարտություն, Եր., 2010:
15. Գևորգյան Ե., Միրզոյան Լ., Սխալ և ճիշտ, Եր., 2006:
16. Եզոպոսի առակները, Եր., 1990:
17. Թումանյան Հ., Դիտողություններ լեզվի մասին // Հ. Թումանյան, ԵԼԺ, հ. 8, Եր., 1999:
18. Ժողովրդագրական հիմնական հասկացությունների բառարան, Եր., «Անտարես», 2008:
19. Կիրակոսյան Գ., Ղուչյան Հ., Տիգրանյան Ի., Տնտեսագիտական բացատրական բառարան, Եր., «Տնտեսագետ», 1999:
20. Հախվերդյան Լ., Զրույցներ լեզվի մասին, Եր., 1993:
21. Միրզոյան Վ., Հայերենը՝ անաղարտ, Եր., 2013:
22. Միրզոյան Վ., Ճարտասանություն, Եր., 2012:
23. Նալչաջյան Ա., Հոգեբանական բառարան, Եր., 1984:

24. Շիրվանզադե Ա., Պետք է լեզուն մաքրել // Շիրվանզադե, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 10, Եր., 1962:
25. Ջրբաշյան Էր., Մախչանյան Հ., Գրականագիտական բառարան, 2-րդ, լրաց. և վերամշ. հրատ., Եր., 1980:
26. Սևակ Պ., Պահպանենք և հարստացնենք մայրենին // Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 5, Եր., 1974:
27. Վարուժան Դ., Հորդորներ սկսնակներուն // ԵԼԺ, հ. 3:
28. Վեյներ Դ., Վայնինգ Է., Քաղաքականության վերլուծություն. հասկացություններ և պրակտիկա, թարգմ. անգլ., Եր., 2010:
29. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Եր., 2006:
30. Փալ Լ., Քաղաքականության վերլուծության շուրջ. հանրային կառավարման հիմնախնդիրներն անհանգիստ ժամանակներում, թարգմ. անգլ., Եր., 2005:
31. Փիլիսոփայական բառարան, Եր., «Հայաստան», 1975:
32. Քալանթարյան Պ., Արտադրության կազմակերպում, Եր., 2004:
33. Витгенштейн Л., Логико-философский трактат // Философские работы. Ч. 1 / Пер. с нем., М., 1984.
34. Волков Ю., Диссертация: подготовка, защита, оформление: практическое пособие. М., 2005.
35. Дейк Т.А. ван, Язык. Познание. Коммуникация / Пер. с англ., М., 1989.
36. Марьянович А., Князькин И., Диссертация. Инструкция по подготовке и защите. М., 2009.
37. Оформление научных работ: межвуз. метод. пособие для высш. учеб. заведений. Новосибирск, 2006.
38. Рассел Б., Философия логического атомизма / Пер. с англ., Томск, 1999.
39. Словарь-справочник менеджера / Под ред. М. Лапусты. М., 1996.
40. Стрельникова А., Правила оформления диссертаций. М., 2009.
41. Aaronson S., Style in Scientific Writing // <http://www.garfield.library.upenn.edu/essays/v3p004y1977-78.pdf>
42. Frymier A., Nadler M., Persuasion: Integrating Theory, Research, and Practice. Dubuque (Iowa), 2007.
43. Hopkins W., Guidelines on style for scientific writing // <http://www.sportsci.org/jour/9901/wghstyle.html>;
44. Lane J.-E., Public Administration and Public Management. L., 2005.
45. Russel B., Human Knowledge: Its Scope and Limits. London, 2009.
46. <http://www.anglistika.upol.cz/Scientific%20style.pdf>
47. <http://bitbucket.icaap.org/>
48. <http://www.businessdictionary.com/>
49. <http://plato.stanford.edu/entries/definitions/>

АННОТАЦИЯ

В.А. Мирзоян

Логико-лингвистический анализ современного экономического дискурса

Бесспорна важность языка как для научного исследования, так и для научных публикаций. Подобно всем другим формам устной и письменной коммуникации между людьми, здесь также происходит движение по цепи “мысль – речь – мысль”. Автор сообщения, желая передать собственную мысль адресату, облакает ее в определенную речевую ткань; адресат (читатель или слушатель) посредством речевой коммуникации восстанавливает намерение (интенцию) автора, т.е. происходит то, что обычно именуется “пониманием”. Языковые средства призваны служить именно тому, чтобы, во-первых, идеи автора научной публикации были максимально идентично отражены в его речи и, во-вторых, были созданы необходимые лингвистические условия для аутентичного восприятия, воспроизводства и понимания идей автора потенциальным читателем. Два эти требования и формируют особенности функционирования естественного языка в сфере науки – научного стиля, или, условно говоря, “языка науки”. Это – терминологическая точность, ясность изложения, наличие дефиниций, логичность выводов, четко сформулированная новизна (особенно для диссертационных работ), возможная сжатость, минимальная (по сравнению с художественной литературой) экспрессивность, использование преимущественно безличных оборотов и т.п.

В настоящей работе теоретические вопросы конкретизированы на примере анализа ряда публикаций по проблемам современной экономической науки. Выделены некоторые узловые термины, не вполне четкое использование которых неизбежно создает семантическую путаницу, нарушения законов формальной логики, из-за чего не только происходит искажение авторского замысла, но и возникают серьезные когнитивные препятствия перед читателем. Предлагаются также соответствующие корректировки рассмотренных ошибок.

SUMMARY

V.A. Mirzoyan

Logical and Linguistic Analysis of Modern Economic Discourse

There is no doubt about importance of language both of scientific research and presentation of scientific publications. As for any other forms of spoken and written human communication, we can certify here the existence of «Thought – Speaking act – Thought» chain. Indeed, the process of understanding between two sides of communication is a chain of following events: the author gives a form to his ideas, which means he creates, using language means, a concrete text, then the reader or listener tries to recover the author's intention. So any use of language in science has two main functions: first – help author maximal identically formulating his ideas, second – facilitate reader maximal authentically receive, recover and understand author's ideas. Therefore scientific style has following features: usage of specific terms, clear definitions, logical sequence of utterance, lack of expressiveness, condensed utterance, novelty (especially for the scientific thesis), impersonal turns of speech, precisely formulated statements and so on. There are many important conditions and factors for adequate apprehension between the two sides of communication (both orally or written) – between author and his audience.

Theoretical analysis of scientific style is used in this investigation for some examples from economics publications. There were distinguished several main terms, unclear use of which inevitably creates semantic confusion, distorts author's intention and arises serious cognitive obstacles for any potential reader. There were also made some suggestions for suitable correction of those distortions.

ՀՊՏՀ ՆԵՐՎԱՄԱՍԱՐԱՆԱԿԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ

Վ.Ա. Միրզոյան
փ.գ.դ., պրոֆեսոր

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ԽՈՍՈՒՅԹԻ ԼԵԶՎԱՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Խմբագիր՝ Ս. Ալավերդյան
Էջադրումը և սրբագրումը՝ Ռ. Պետրոսյանի
Ձևավորումը՝ Ն. Խչեյանի

Չափս՝ 60x84¹/₁₆:
3,7 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 100:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128
010 59 34 37